15109

Դ. ՄԻՆ

ԱՐԵՎՄՏՅԱՆ

ՈՒԿՐԱԻՆԱ

32(47.7)
Մ-72

ՊԱՐՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄՍԿՎԱ • 1939

26 SEP 2006

Գրքեր տարբեր բոլոր յերկրների, միացե՛ք

1 DEC 2009

Դ. ՄԻՆ

32(47.7)
Մ-72

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՈՒԿՐԱԻՆԱ

ՊԱՐԼԱՊԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1989

01 JUL 2013

15709

6366
39

Д. МИН

ЗАПАДНАЯ УКРАИНА

Государственное издательство полит. литературы
Ереван 1939

1939 թ. սեպտեմբերի 17-ին Խորհրդային կառավարությունն ընդունեց պատմական վորոշում — ողնության ձեռք մեկնել ուկրաինացի ու բելոռուս ժողովրդներին, վորոնք անանկացած լեհական պետության ճախարդ զեկավարների կողմից թողնված եյին բախտի քմահաճույքին: Միլիոնավոր ուկրաինացիներ յերկար տարիների ընթացքում տրնջում եյին լեհական պանների լծի տակ և յերազում՝ ազատագրության մասին: Զքողարկված հույսով նրանք նայում եյին դեպի Արևելք, վորտեղ այլևս չկա իշխան ու կոմս Ռաձիվիլլների, Պոտոցկիների, Վիշնեվեցկիների իշխանությունը, վորտեղ յերեսուն միլիոնանոց ուկրաինական ժողովուրդը, ԽՍՀՄ մյուս ժողովուրդների հետ յեղբայրական դաշինք կնքած, կառուցում է նոր, յերջանիկ կյանք:

«Մենք գիտեյինք,— ասաց Արևմտյան Ուկրաինայի գյուղացի Մարչուկը՝ Կարմիր Բանակի զորամասերը նրա գյուղը մտնելու ժամանակ,— թե ինչպես ուրախ և ապրում գյուղացիությունը սահմանի այն կողմում, Խորհրդային յերկրում: Յերբ լուսադեմին մենք գնում եյինք աշխատելու կալվածատիրոջ մոտ, մենք նայում եյինք դեպի արևելք, վորտեղից ծագում եր վառ արեգակը, և ասում եյինք. «Ահա նա, ջերմ արեգակը, վորը ծագում է այն կողմից, վորտեղ կյանքը լավ է»: Վրա հասան, վերջապես, ուրախ որեր նաև մեր կյանքի մեջ, իրականացան մեր յերազանքները»:

Նոր կյանքի արեգակը լուսավորում է Արևմտյան Ուկրաինայի դաշտերը, գյուղերը և քաղաքները: Անցան բրոնության, աղքատության և իրավազրկության սև որերը: Չկա այլևս լեհական կալվածատերերի ու կապիտալիստների ճնշումը, ինչպես նաև՝ չկա լեհական պետությունը, այդ խորթ մայրը և ժողովուրդների բանտը, պետություն, վորը վրվեց ինչպես թղթե տնակ: Արևմտյան Ուկրաինայի աշ-

խատասեր և ազատասեր ժողովուրդը խորհրդային ժողովրդի աջակցությամբ ուղղում է իր մեջքը, ձեռք է բերում Հայրենիք, վորից նա զրկված եր, իսկ նրա հետ մեկտեղ ձեռք է բերում ազատություն, խաղաղություն, կուլտուրա, յերջանկություն:

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՈՒԿՐԱԻՆԱՆ ՌՈՒՍԱԿԱՆ ՎԱՂԵՄԻ ՅԵՐԿԻՐ Ե

Արևմտյան Ուկրաինան—Գալիչի յերկիրը և Վոլինը— յեղել է ռուսական վաղեմի յերկիր, վորտեղ շատ վաղուց բնակվել են ռուսներ և ուկրաինացիներ: IX—XI դարերում այն մտնում եր Կիևյան պետության կազմի մեջ: Ինչպես հայտնի յե, հատկապես այդ ժամանակաշրջանում կազմավորվեցին և՛ վելիկոռուսական, և՛ ուկրաինական, և՛ բելոռուսական ժողովուրդները, կոփվեց ռուսական մեծ ժողովրդի հզորությունը:

Կիևյան պետության անկումից հետո Վոլինը և Գալիչի յերկիրը վորոշ ժամանակ գոյություն ունեցան վորպես ֆեոդալական ինքնուրույն իշխանություններ (княжества), իսկ այնուհետև— XII դարի վերջում ձուլվեցին Գալիչ–Վոլինական մի իշխանության մեջ, վորն իր հողերը փռել եր Լիտվայից մինչև Դանուբի հովիտը և Կարպատներից մինչև Կիևշչինա: Գալիչ–Վոլինական իշխանությունը կենտրոնական Յեվրոպայի ամենից հարուստ, հզոր ու կուլտուրական պետություններից մեկն եր:

Գալիչինայում և Վոլինում աճեցին առևտրական և արհեստագործական մեծ քաղաքներ—Գալիչ, Լվով, Պերեմիշլ, Զվենիգորոդ, Վլադիմիր և ուրիշներ: Գալիչ–Վոլինական իշխանությունն առևտրական ու կուլտուրական կապ եր պահպանում Բյուզանդիայի, Հռոմի, Հունգարիայի ու Լեհաստանի հետ:

Դեպի Գալիչինայի և Վոլինի հարստությունները հաճախ իրենց թաթը մեկնում են նրանց ուժեղ հարևանները— Լեհաստանը, Լիտվան և Հունգարիան, հաճախակի հարձակվելով ռուսական իշխանության տերիտորիայի վրա: Տասնյակ տարիների ընթացքում իշխան Դանիել Ռոմանովիչը (1202—1264) համառ պայքար եր մղում լեհ–հունգար–լիտվական հափշտակիչների դեմ և աղգարնակության լայն մասսաների աջակցությամբ նրանց դուրս քշեց հարազատ յերկրից:

Մոտ 150 տարի գոյություն ունեցավ Գալիչ–Վոլինական իշխանությունը: Բայց թաթարական չընդհատվող արշավանքները և ռուսական մնացած յերկրներից կտրված լինելը XIII դարի վերջին—XIV դարի սկզբին հասցրին նրա թուլացման: XIV դարում (1387 թ.) Գալիցիան և Վոլինի մի մասն ընկնում են Լեհաստանի լծի տակ, իսկ Գալիչ–Վոլինական իշխանության մնացած հողերը անցնում են Լիտվային:

Արևմտյան Ուկրաինան դառնում է լեհական զաղութացման որյեկտ: Մի քիչ ավելի ուշ, XVI դարում, ցյախտական Լեհաստանը, վորը միացել եր Լիտվայի հետ լեհ–լիտվական միասնական մի պետության մեջ (Речь Посполитая), հափշտակում է ուկրաինական նոր յերկրներ — համարյա թե Դնեպրի ամբողջ աջ ափը: Լեհական պանները հսկայական տերիտորիաների տեր դարձան և ձեռնամուխ յեղան ուկրաինական բազմամիլիոն բնակչության կողոպտմանն ու շահագործմանը: XVI և XVII դարերի ընթացքում Ուկրաինայի գյուղացիությունը վերջնականապես զրկվեց քաղաքացիական ու դուրքային իր իրավունքներից ու դարձավ լեհական պանների տնտեսական անսահմանափակ շահագործման որյեկտ, շահագործում, վորն առանձնապես ուժեղացավ դրամական տնտեսության զարգացման կապակցությամբ և Լեհաստանը Ֆրանսիայի, Անգլիայի և ուրիշ յերկրների համար հացի գլխավոր մատակարարող դառնալու հետևանքով: Զգտելով վորքան հնարավոր է շատ հացահատիկ արտահանել արտասահման, լեհական կալվածատերերը բռնի կերպով հափշտակում են գյուղացիական հողերը, մարգագետիններն ու անտառները, կոռը հասցնում են հրեշային չափերի, մտցնում են նորանոր պարհակներ:

Լեհական խոշորագույն իշխանների ձեռքում կենտրոնացան անհաշիվ հարստություններ: XVII դարի 40-ական թվականներին Յերեմիա Վիշնեվեցկին Պոլտավայի, Կրեմենչուգի, Լուբնիի, Ռոմնիի և 40 հազար գյուղացիական տնտ.–

սությունների տեր եր։ Իշխան Ոստրոժսկին Վոլինում ուներ 40 գյուղակ, 100 քաղաք և ավան ու 1300 գյուղ։

Պանից եր կախված գյուղացու կյանքն ու մահը։ Գյուղացիներն ամրացվել եյին նրանց թողած խղճուկ հողակտորներին։ Նրանք առանց համապատասխան թույլտվության իրավունք չունեյին հեռանալու կալվածատիրոջ կալվածքից։ Կորը, զանազան պարհակները գյուղացիներից խլում եյին բոլոր ուժերը։

Յեթե XVI դարում Վոլինում մի տնտեսության պարհակը տարվա մեջ կազմում եր 240 օր, ապա XVII դարում այն արդեն կազմում եր 304 օր։ Շատ տեղերում կալվածատերերի համար աշխատում եյին շաբաթվա մեջ վեց օր, իսկ յոթերորդ օրը պետք է միայն կանայք աշխատեյին։ Բացի կորից, գյուղացիները բահրա եյին վճարում դրամով և մթերքներով։ Նրանք տանջվում եյին ֆեոդալական զանազան հարկերից— յերեխայի ծննդյան դեպքում, ամուսնության դեպքում, անասուններն արածացնելու իրավունքի համար, ալյուր աղալու համար և այլն։

Ցրանական ինժեներ Գիյոմ Լեվասսեր դը-Բոպլանը, վորը XVII դարում այցելել է Ուկրաինա, այսպես է նկարագրել գյուղացիների դրությունը.

«Այնտեղ գյուղացիները չափազանց աղքատ են, վորովհետև նրանք ստիպված են շաբաթվա մեջ յերեք օր իրենց ձիերով աշխատել տիրոջ ոդտին և նրան տալ, նրանից ստացված հողի քանակի համաձայն, մեծ քանակությամբ հացահատիկ, բազմաթիվ աքաղաղներ, հավեր, բադեր ու ճուտեր զատկին, հոգեղալտին և ծննդյան տոնին։ Բացի դրանից, նրանք պետք է տիրոջ համար փայտ կրեն և կատարեն կոռի ուրիշ բազմաթիվ տեսակները։ Դրան զուգընթաց, կալվածատերերը նրանցից դրամական պարհակ, ինչպես նաև վոչխարներից, խոզի ճուտերից, մեղրից, բոլոր պտուղներից տասանորդ և յերեք տարին մեկ անգամ յերրորդ յեղն են պահանջում։ Մի խոսքով, նրանք հարկադրված են իրենց պարոնին տալ այն ամենը, ինչ վոր նրա խելքին կլիչի պահանջելու... Բայց ամենից զլխավորն այն է, վոր նրանց տերերն ոդտվում են անսահմանափակ իշխանությամբ վոչ միայն իրենց հպատակների գույքի, այլ և

կյանքի նկատմամբ։ Ահա թե ինչքան մեծ են լեհական ազնվականության արտոնությունները, վորն ապրում է կարծես դրախտի մեջ, մինչդեռ գյուղացիները գտնվում են կարծես թե քավարանում»։

Լեհական կալվածատերը ուկրաինական գյուղում անսահմանափակ տեր եր, ինքն եր դատ ու դատաստան անում։ Ամենաչնչին հանցանքի համար գյուղացիներին բանտ եյին գցում, ծեծում եյին։ Պանները գյուղացիներին դարձրել եյին ստրուկներ։ Նրանց խոշտանգում, դանակոծում, կենդանի թաղում եյին հողի մեջ, մերկ մարդկանց վրա սառնամանիքի ժամանակ ջուր եյին լցնում և սառեցնում եյին, շներով հալածում եյին, նստեցնում եյին ցցերի վրա, կտրատում, կտոր-կտոր եյին անում։ Շլյախտիչներն անպատիժ կերպով բռնաբարում եյին գյուղացիական աղջիկներին։ «Յեթե վորևե մաղնատի մասին պատմվի ճշմարիտ պատմությունը, ապա դժոխքն անդամ կսարսափի դրանից»։— գրում եր ուկրաինական մեծ պոետ Տարաս Շևչենկոն։

Անտանելի կեղեքումը ճնշում եր վոչ միայն գյուղացությանը, այլև ուկրաինական քաղաքային ազգաբնակությանը։ Ուկրաինական քաղաքներում յերևացին լեհական ավաններ։ Ոգտվելով իրենց իշխանությունից, նրանք կեղեքում եյին բնակիչներին, հարկադրելով նրանց տուրք վճարել բազմազիմի առիթով՝ արհեստով զբաղվելու իրավունքի համար, ամուսնության համար, ապահարզանի համար, ժառանգության համար։ Ուկրաինական առևտրականներն ու արհեստավորները իրավունք չունեյին ընտրովի պաշտոններ վարել քաղաքային ինքնավարություններում, մտնել համքարությունների մեջ, ունենալ առևտրական խանութներ։ Ուկրաինացիներին արգելվում եր զբաղվել առավել յեկամտաբեր արհեստներով՝ պահել դեղատներ և բակալեյայի խանութներ, հատով կտորներ վաճառել, գինու առևտուր անել և այլն։ Ուկրաինացիներին արգելված եր զբաղվել ազատ արվեստներով։ Ուկրաինական յերեխաների համար քաղաքային դպրոցների մուտքը փակ եր։ Լվովում, Արևմտյան Ուկրաինայի կենտրոնում, ուկրաինական արհեստավորներն ու առևտրականներն իրավունք

ունեցին ապրել և ձեռնարկություններ բաց անել միայն մի փողոցի վրա, որը կոչվում էր Ռուսկայա։ Այդ փողոցից դուրս ուկրաինացիներին արգելված էր նույնիսկ կատարել կրոնական ծիսակատարություններ։

Քաղաքական ու տնտեսական կեղեքմանը միանում էր ազգային-կրոնական կեղեքումը։ Պանները ուզում էին լեհացնել ուկրաինական ժողովրդին, որպեսզի ընդմիշտ նրան անջատեն Մոսկովյան պետությունից, յեղբայրական ռուսական ժողովրդից։ Նրանք բռնի կերպով ուկրաինական ժողովրդի վրին վաթաթում էին իրենց լեզուն, իրենց կուլտուրան, իրենց հավատը։ Դաղութարարները ուկրաինական լեզուն, ուկրաինական բաղմադարյան կուլտուրան դիտում էին որպես «ցածր ռասայի», որպես «դյադարական» կուլտուրա։ Բռնությամբ մացվում էր կաթոլիկությունը։ Ուկրաինական աղգաբնակությանը կաթոլիկացնելու նպատակով մացվեց յեկեղեցական ունիան, որը դիտվում էր որպես կաթոլիկությանն անցնելու մի աստիճան։ Բայց կաթոլիկական յեկեղեցու փորձը տապալվեց։ քաղաքի և դյուղի բնակչությունը թշնամաբար վերաբերվեց ունիային, նրա մեջ տեսնելով ճորտատիրական ու ազգային ճնշման ուժեղացման ձևերից մեկը։

Սակայն ուկրաինական ժողովրդին չկարողացան կոտրել բոլոր տեսակի խորամանկություններն ու հետապնդումները։ Նրան չկոտրեց նաև ուկրաինական ջարդերի ալիքը, որն անցավ ամբողջ յերկրով մեկ։ Ահա թե ինչպես է նկարագրվում 1845 թ. հրատարակված նյութերի մեջ 1634 թ. Լուցկում տեղի ունեցած այդպիսի ջարդերից մեկը. «Ցավ ով էլ վոր նրանց պատահեր, միայն թե ռոսին[1] լիներ, նրանց կողմից առանց վորևե խղճահարության ծեծվում և հաշմանդամ էր դարձվում— սրերով, փայտերով և աղյուսներով— կամ ավելի ճիշտը— քարերով... Մինչև մութն ընկնելը, անցնելով մերթ այն, մերթ այս փողոցով, նրանք ծեծում և ջարդում էին ամեն մեկին, ով ընկնում էր նրանց ձեռքը, նույնիսկ բոլորովին անմեղին, միայն թե նա ռոսին լիներ... Ջարդը շարունակվեց մի քանի շաբաթ»։

1 Ուկրաինացի։

Ատելությունը դեպի լեհական պաններն աճում էր։ Գերությունից փախչելով, դյուղական բնակչությունն ուժեղ թափով լցվում էր Ուկրաինայի անծայրածիր տափաստանները, ավելի ու ավելի ցած իջնելով Դնեպրի և Արևելյան Բուգի ուղղությամբ, որտեղ դեռ չէր կարողացել հասնել շլյախտիչը։ Հաղարավոր ուկրաինացի դյուղացիներ փախչում էին դեպի հարավ, լրացնելով այստեղ հաստատված ազատ կազակության շարքերը։ Միաժամանակ հաղարավոր ուկրաինացի դյուղացիներ փախչում էին լեհական պաններից դեպի Մոսկովյան յերկրները, ռուսական ժողովրդի մեջ տեսնելով միակ պաշտպանին։

1630 թ. այսպես կոչված «Զապորոժյան սեչի» ռայոնի կազակների թիվը հասնում էր մինչև 80 հազար։ Զապորոժցիներն ամենից ավելի ակտիվ, ամենից ավելի անհաշտ մարտիկներն էին լեհական պանների դեմ։ Նրանք հաճախ են գլխավորել իր անկախության համար պայքարող ուկրաինական ժողովրդի ապստամբությունները։

Գյուղացիությունն ավելի ու ավելի հաճախ էր վոտքի յելնում իր կեղեքիչների դեմ պայքարելու։ Մերթ այստեղ, մերթ այնտեղ բռնկվում էին ժողովրդական ապստամբություններ, որոնք առանձնապես հաճախակի էին դարձել XVI դարի վերջից։ 1591—1596 թ. թ. Կոսինսկու ղեկավարած խոշոր ապստամբությունն ընդգրկել էր Վոլինը, Բրացլավսկոյե և Կիևյան վոյեվոդությունները։ Կազակ-գյուղացիական զորքը գրավել էր ահագին տերիտորիաներ և մի շարք խոշոր քաղաքներ—Կիև, Լուցկ և ուրիշ։։ Ապստամբները քարուքանդ էին անում կալվածատիրական տները, պանական դղյակները։ Զորս տարվա արյունալի պայքարից հետո ապստամբությունը ջախջախվեց լեհ-հունգարական զորքերի միացյալ ուժերով։ Ապստամբության դաժան ճնշումը չէր կարող ուկրաինական ժողովրդին ստիպել վար դնելու զենքը։

Ամբողջ XVII դարը լիքն է Ուկրաինայի ազգային ազատագրության համար աշխատավոր լայն մասսաների մղած հերոսական պայքարով։ 1630 թ. տեղի յե ունենում մի ապստամբություն, որը ղեկավարում էր գեման Տարաս Ֆեոդորովիչը (Գոգոլի «Տարաս Բուլբա» վիպակի հերոսը)։

Պերեյասլավի տակ տեղի ունեցած յերեք-չաբաթյա մարտերից հետո լեհական զորքը ջարդվեց: Պաներն ստիպված յեղան մի շարք զիջումներ անել կազակներին:

1637—1638 թ. թ. Ուկրաինան կրկին ընդդրկված եր ժողովրդական լայն շարժմամբ:

Ամենից ավելի խոշոր ապստամբություն, վորն ընդունել եր գյուղացիական հեղափոխության բնույթ, բռնկվեց 1648 թ.: Գյուղացիությունն ու քաղաքային աշխատավոր բնակչությունը շարժվեցին շլյախտայի դեմ:

Մի քանի տարի տևեց համառ ու արյունալի պայքարը: Լեհական պաների հրոսակախմբերը կրեցին մի շարք խոշոր պարտություններ՝ 1648 թ. Ժյոլտիե Վոդիի, Կորսունի և Պեմեվայի տակ, 1649 թ.՝ Զբորոժի և Զբորովոյի (Գալիցիա) տակ, 1651 թ.՝ Վիննիցայի տակ, 1652 թ.՝ Բատուդի տակ և այլն: Մի ժամանակ կազակո-գյուղացիական աշխարհազորը (ополчение) տիրում եր համարյա ամբողջ Ուկրաինային: Ապստամբության ղեկավար Բոդդան Խմելնիցկու արժանիքը կայանում եր նրանում, վոր նա ընդհանուր դնաց ժողովրդական մասսաների ակնկալություններին, մասսաներ, վորոնք յեղբայրական ռուս ժողովրդից ոգնություն եյին սպասում, և դիմեց Մոսկվային՝ Ուկրաինան Մոսկովյան պետությանը միացնելու խնդրով:

1654 թ. հունվարի 8-ին իրականացվեց ուկրաինական ժողովրդի վերամիացումը ռուս ժողովրդի հետ: Զարմանալի չե, վոր Մոսկվայի հետ պայմանագիր կնքելը Ուկրաինայում վերածվեց համաժողովրդական տոնախմբության: «Ամբողջ Ուկրաինայում ամբողջ ժողովուրդը այն մեծ հաճույքով կատարեց... և ժողովրդի մեջ մեծ ուրախություն յեղավ», գրում եր տարեգիր Սամովիդեցը:

Սակայն դրան հետևող պատերազմը վերջացավ Ռուսաստանի և Լեհաստանի միջև կնքված մի համաձայնությամբ, վորի համաձայն առաջինին մնում է ձախափնյա Ուկրաինան ու Կիևը, իսկ Արևմտյան Ուկրաինան անցնում է Լեհաստանին:

Պաները վերստին դարձան Վոլինի ու Գալիչինայի տերեր: Ե՛լ ավելի անտանելի դարձավ ճորտատիրական կեղեքումը: Գյուղացիական մասսաները դրան պատասխանում են նոր ապստամբություններով: Առանձնապես նշանակալից եր 1768 թ. ապստամբությունը—այսպես կոչված Կոլիյեվշչինան, վորը յերգված է ուկրաինական մեծ պոետ Շեվչենկոյի «Գայդամակներ» հայտնի յերկի մեջ:

Ամբողջ Ուկրաինան ընդդրկված եր ապստամբությամբ: Պանական ջոկատների դեմ ուղղված զինված պայքարին մասնակցում եյին նույնիսկ կանայք: Ահա թե ինչպես է նկարագրում Տարաս Շեվչենկոն ապստամբության եպիզոդներից մեկը.

Встало солнце. Украина
Дымилась, пылала.
Где в живых осталась шляхта,
Запершись, дрожала.
А по виселицам в селах
Ляхи[1] в ряд вселя
Чином старше. На прочих
Веревок жалели.
По улицам, по дорогам—
Груды трупов с ночи.
Псы грызут их, а вороны
Выклевали очи...
По дворам везде остались
Дети да собаки.
Даже бабы, взяв ухваты,
Ушли в гайдамаки.

Գոնտայի և Ժելեզնյակի ղեկավարած ապստամբությունը դաժանորեն ճնշվեց: Ինքը Գոնտան բռնվեց լեհացիների կողմից և գաղանաբար մասնատվեց:

Անընդհատ բռնկվող ապստամբությունները թուլացնում եյին պանական Լեհաստանը, վորն առանց այն էլ ֆեոդալների շահագործման հետևանքով գնում եր դեպի անկում, շահագործում, վորն արգելակում եր արտադրողական ուժերի զարգացումը: Յերեք բաժանումների հետևանքով (1772, 1793 և 1795 թ. թ.) Լեհաստանը դադարեց վորպես ինքնուրույն պետություն գոյություն ունենալուց:

1 Լեհացիներ:

Արևմտյան Ուկրաինայի տերիտորիան բաժանվեց Ռուսաստանի և Ավստրո-Հունգարիայի միջև:

Ուկրաինական գյուղացիության դրությունը չփոխվեց. լեհական հողատիրությունը պահպանվեց, ազգային ճնշումը չդադարեց: Ուկրաինայի աշխատավոր գյուղացիությունը, ինչպես նաև ռուս ժողովուրդը, XIX դարում էլ շարունակում է պայքարել ֆեոդալական և ազգային ճնշման դեմ: Սակայն այդ պայքարը չէր կարող հաղթանակով վերջանալ, քանի դեռ գյուղացիության դեկավարությունը չէր անցնի պրոլետարիատին: «Միայն բանվոր դասակարգի դիկտատուրայամբ կատարված կոմբինացված ապստամբությունը կարող է նպատակին հասցնել» (Ստալին):

1917 թ. Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխությունը ուկրաինական ժողովրդի համար ուղիներ բացեց դեպի ազատ զարգացում, նրան փրկելով կապիտալիստների և կալվածատերերի լծից: Լենինի—Ստալինի մեծ կուսակցության դեկավարությամբ աճում և ամրանում է Խորհրդային Ուկրաինան:

Արևմտյան Ուկրաինայի աշխատավորների բախտը այլ կերպ դասավորվեց:

1914—1918 թ.թ. իմպերիալիստական համաշխարհային պատերազմից հետո Լեհաստանը կրկին հանդես եկավ որպես ինքնուրույն, բայց բոլորովին անկենսունակ պետական կազմավորում: Նոր Լեհաստանը Վերսալյան պայմանագրի գավակն էր, պայմանագիր, որ հաղթող երկրները—Անգլիան և Ֆրանսիան փաթաթել էին հաղթվածների վզին: Առանց պատմական, եթնոգրաֆիական և տնտեսական պայմանները հաշվի առնելու Լեհաստանի կազմի մեջ մտցվել էին տարբեր պետություններից հափշտակած մարզեր՝ ազգային տարբեր բնակչությամբ, որոնք տնտեսական և կուլտուր-քաղաքական տեսակետից ձգտում էին դեպի ուրիշ կենտրոններ: Լեհական պետության բազկացուցիչ մասերի ազգաբնակության — ուկրաինացիների, բելոռուսների և ուրիշների տաճած ատելությունը հափշտակիչների նկատմամբ քիչ էր անհանգստացնում հետպատերազմյան Ցեվրոպայի բախտը տնորինողներին:

Պետական նոր կազմավորումը— լաթային, բազմազգ, ոստարների տերիտորիաների կողոպուտի հաշվին ուռած Լեհաստանը, որն ամբողջովին դլխավորում էր փտած և վաճառված փառասերների ուլբրեխների կլիկի կողմից—հարկավոր էր Անտանտային որպես վահան Գերմանիայի դեմ, իսկ դլխավորը՝ որպես պլացդարմ առաջին սոցիալիստական պետության՝ ԽՍՀՄ վրա հարձակվելու համար:

«Լեհաստանից,— դրում էր Լենինը,— Վերսալյան հաշտությունը ստեղծեց բուֆերային պետություն, որին... Անտանտան դիտում էր որպես դենք՝ ուղղված բոլշևիկների դեմ»[1]:

Այդ բանը բացահայտորեն խոստովանվեց Ֆրանսական պրեմիեր-մինիստրը, հակախորհրդային բլոկի կազմակերպիչ Կլեմանսոն, որը Լեհաստանի կազմակերպման առթիվ 1919 թվին ասաց. «Բոլշևիկյան Ռուսաստանի սպառնալիքի դեմ մենք կառուցում ենք բարյեր փշալար»:

Լեհական պետության կազմի մեջ բռնի կերպով մտցված մարզերի թվում դտնվեց նաև Արևմտյան Ուկրաինան: Ճնշելով ուկրաինական աշխատավորների ազգային-ազատագրական շարժումը, որ ծավալվել էր 1919 թ. Գալիցիայում, լեհական իմպերիալիստները հափշտակեցին Արևմտյան Ուկրաինայի մեծ մասը— Արևելյան Գալիցիան, Վոլինը և ուրիշ տարածներ: Ուկրաինական մեռցած հողերն անցան Ռումինիային (Բուկովինան): 1923 թ. Լեհաստանի կողմից Արևմտյան Ուկրաինայի հափշտակումը սանկցիայի յենթարկվեց Անտանտայի «Դեսպանների խորհրդի» կողմից: Դա Խորհրդային հանրապետության դեմ ուղղված արշավանքներին Լեհաստանի ունեցած մասնակցության վարձատրությունն էր: Անտանտայի սանկցիայով լեհական հափշտակիչներն Արևմտյան Ուկրաինան վերածեցին իրենց դաղութի, ամենապատանային շահագործման, ազգային վայրենի ճնշման ու կամայականության որջկատի:

ՀԱՐՈՒՍՏ, ԲԱՑՑ ՀԵՏԱՄՆԱՑ ՑԵՐԿԻՐ

Կարմիր Բանակի կողմից ազատագրված Արևմտյան Ուկրաինայում կա մոտ 10 միլիոն բնակիչ, որից 8 միլիոնը

1 Լենին, հ. XXV, էջ 401:

ուկրաինացիներ են։ Արևմտյան Ուկրաինան վարչական տեսակետից բաժանված էր նախկին Լեհաստանի հետևյալ վոյեվոդությունների միջև. Լվովի (կենտրոնը՝ Լվով քաղաքը), Ստանիսլավովի (կենտրոնը՝ Ստանիսլավով ք.), Տարնոպոլի (կենտրոնը՝ Տարնոպոլ ք.), Վոլինի (կենտրոնը՝ Լուցկ ք.) և Պոլեսյեյի մի մասը։

Արևմտյան Ուկրաինան իրենից ներկայացնում է ընդարձակ հարթավայր, որն ընդլայնական ուղղությամբ կտրված է Լյուբլինյան լեռների ճյուղավորությամբ, լեռներ, որոնց բարձրությունը մինչև 600 մետր է։ Հարավում անցնում են Կարպատյան լեռների ճյուղերը մինչև 2 հազար մետր բարձրությամբ, որոնք հարուստ են գանգրան հանածոներով։ Հյուսիս-արևելքում ձգվում են Պինսկի ճահիճները։

Արևմտյան Ուկրաինան ունի հավասարաչափ դասավորված գետերի ցանց։

Հյուսիս-արևմուտքում նա վոռոգվում է Վիսլայի վտակներով, Արևմտյան Բուգով և Սանով, հարավ-արևելքում՝ Դնեստր, Պրուտ և Սիրետ գետերով։ Արևմտյան Ուկրաինայի գետերը ջրառատ են, տարվա ընթացքում նրանց ջրի մակարդակը խիստ փոխվում է, աշնանային և գարնանային հեղեղումները սովորաբար մեծ վնասներ են պատճառում բնակչությանը։ Դնեստրը նավարկելի է, և նրա կարպատյան վտակները, ինչպես նաև Բուգն ու Պրուտը, ոգտագործվում են անտառանյութի լուգարկման համար։

Արևմտյան Ուկրաինայի հողը մոխրանման է, որը հարավում անցնում է սևահողի, լեռներում—քարքարոտ և ավազոտ է։ Ամենից լավ հողը—Պոդոլիայի և Սինոցկի հովիտներումն է։

Կլիմայական ու հողային պայմանների բազմազանությանը համապատասխանում է բուսականության մեծ բազմազանություն։ Արևմտյան Ուկրաինայի տարածության մոտ 30 %-ը ծածկված է եքսպորտային նշանակություն ունեցող անտառներով։ Հարթավայրերում սաղարթավոր և փշատերև տեսակի յեն (սոճի, յեղևնի, կաղնի, հաճարի), լեռներում— միայն փշատերև անտառներ են։ Կարպատների ճյուղերում կան լեռնային ալպիական մարգագետիններ—

վեղեցիկ արոտավայրեր անասունների և խոտհարքի համար։ Արևմտյան Ուկրաինայում աճեցվում են գյուղատնտեսական զանազան կուլտուրաներ— ցորեն, հաճար, գարի, վարսակ, յեգիպտացորեն, տավուտ, ճակնդեղ, վուշ, կանեփ, ծխախոտ, գայլուկ, շաքարի ճակնդեղ, պտղատու ծառերից— տանձենի, խնձորենի, դամբուլ, ծիրանի, դեղձենի և խաղող։

Արևմտյան Ուկրաինան վոչ միայն գյուղատնտեսության ծաղկման հեռանկարներ ունի։ Նրա ընդերքում թաղված են բնական հսկայական հարստություններ, որոնք կարող են արդյունաբերության զարգացման բազա լինել։ Յերկրի հարավային և հարավ- արևմտյան ռայոններում (Կարպատների նախալեռնային մասը) կա նավթ, քարածուխ, ոգոկերիտ (լեռնամոմ), կալիումի աղեր, մարմար, ցինկ, բնական գազ և ուր.։ Այդ ռայոններում նշանակալից քանակությամբ լեռնային գետակների, վտակների ու լճերի առկայությունը մեծ հեռանկարներ է բաց անում «սպիտակ ածխի» ջրային ռեսուրսների—էլեկտրական եներգիայի ոգտագործման համար։ Արևելյան ռայոնները, մասնավորապես Վոլինը, որը Լեհաստանի կազմում համարյա թե ամենից հետամնաց պրովինցիան էր հանդիսանում, նույնպես հարուստ են հանածոներով։ Վոլինի փոխ-վոյեվոդ Գոդլեվսկու հաղորդագրությամբ (1934 թ.) յերկրաբանական հետազոտությունը հանդիպեց քարածխային և 95-տոկոսանոց պղնձահանքի շերտերի։ Հետագա հետախուզումներ չկատարվեցին, և Վոլինը յերկրաբանական տեսակետից բոլորովին ուսումնասիրված չէ։ Վոլինի քարահանքերի պաշարները՝ սկսած ավազաքարերից և վերջացրած գրանիտով — անսպառ են։ Վերջապես, Արևմտյան Ուկրաինայի բոլոր ռայոններում մեծ հնարավորություններ կան գյուղատնտեսական և անտառային տնտեսության պրոդուկտների վերամշակման արդյունաբերության զարգացման համար։

Տնտեսական-աշխարհագրական տեսակետից Արևմտյան Ուկրաինան կարելի յե բաժանել մի շարք ռայոնների, որոնք համընկնում են յերկրի բնական հիմնական առանձնահատկություններին։

Կարպատյան շրջանը իր անտառներով ու լեռնային տափաստաններով։ Բնակչության հիմնական զբաղմունքը անասնապահությունն ու անտառային արհեստներն են։ Այստեղ զարգացած է տնայնագործական փոքրիկ արդյունաբերություն։ Բնակչությունն ապրում է շատ խեղճ և հազարներով արտագաղթում է ուրիշ յերկրներ՝ վաստակ ճարելու։

Կարպատյան նախալեռնային շրջանը — վորը հարավում ընկնում է Կարպատյան լեռների, իսկ հյուսիսում հարթավայրերի միջև։ Զարգացած է հացահատիկի մշակությունը, անասնապահությունը, անտառային տնտեսությունը և այգեգործությունը։ Այստեղ գոյություն ունի աննշան արդյունաբերություն, այն էլ գերազանցորեն՝ կաշվի։ Թույլ է զարգացած, սակայն խոշոր հեռանկարներ ունի լեռնային արդյունաբերությունը (նավթի հանույթը, աղ և ուր.) և նրա պրոդուկտների մշակումը։ Բնակչության խտությունը՝ 1 քառակուսի կիլոմետրի վրա 125—150 մարդ։

Այստեղ կան առևտրական և արդյունաբերական մի շարք կենտրոններ.

Ստանիսլավով, վոր գտնվում է նավթային ռայոնում, հաշվում է 51,4 հազար բնակիչ, յերկաթուղային խոշոր հանդույց է, կան նավթաթորման, փայտամշակման գործարաններ, թղթի ֆաբրիկաներ և յերկաթուղային արհեստանոցներ։

Դրոգոբիչ— նավթային արդյունաբերության կենտրոն և յերկաթուղային հանդույց է, բնակիչները—26,736, նավթի հանույթով զբաղված է բնդամենը 7100 բանվոր (1930 թիվ)։ Դրոգոբիչի գավառում ստանում ելին լեհական նավթի մեծ մասը (86 %), նատուրալ գազ, ոզոկերիտ և մեծ քանակությամբ քարաղ։ Դրոգոբիչի մոտերքում գտնվում են Արևմտյան Ուկրաինայի նավթային խոշորագույն հանքերը—Բորիսլավ քաղաքը։ Այստեղից նավթը խողովակների միջոցով տարվում է Դրոգոբիչ և վերամշակվում է տեղի 8 գործարաններում։

Պերեմիշլ—ռուսական հնագույն բերդ է, վոր գոյություն ուներ դեռ Գալիչ-Վոլինյան իշխանության ժամանակներում։

6366
39

Այդ ռայոնի նշանակալից կետերի թվին են դասվում Ստրիյ քաղաքը (30 հազ. բնակիչ)։

Պոդոլիան, վորը ՈՒԽՍՀ Պոդոլիայի շրջանակությունն է հանդիսանում, հիմնականում գյուղատնտեսական ռայոն է (ցորեն, գարի, յեղիսպացորեն, ծխախոտ և ուր.), ծխախոտի և գինեգործական զարգացած արդյունաբերությամբ։

Այստեղ է գտնվում Արևմտյան Ուկրաինայի քաղաքական, տնտեսական և կուլտուրական խոշորագույն կենտրոնը—Լվով քաղաքը, վորը հաշվում է 300 հազարից ավելի բնակչություն։ Լվովը ընկած է Բուգ գետը թափվող Պելտեվ գետի ավազանում։ Այն Արևմտյան Ուկրաինայի հնագույն քաղաքներից մեկն է, վորը հիմնադրվել է 1241 թ.։ Գտնվելով Արևմտյան Յեվրոպան Ռուսիայի հետ միացնող առևտրական ճանապարհների կենտրոնում, Լվովը արագորեն վերածվեց առևտրական խոշոր քաղաքի։ Մինչ պատերազմը մտնում էր Ավստրո-Հունգարիայի կազմի մեջ, 1918 թվին հափշտակվեց Լեհաստանի կողմից։ Լեհական հափշտակիչները, արգելակելով Արևմտյան Ուկրաինայի տնտեսական զարգացումը, հանգեցրին այն բանին, վոր Լվովը չդարձավ ինդուստրիալ քաղաք, չնայած վոր նրա շրջակայքում կա նավթ, գորշ ածուխ, քարաղ։ Արդյունաբերությունը գերազանցորեն սննդի և չինարարական բնույթի է, կան մի քանի փոքրիկ մեքենաշինական և քիմիական գործարաններ։ Լվովը կուլտուրական խոշոր կենտրոն է։ Այստեղ գտնվում են համալսարան, վոր հիմնված է դեռևս 1784 թ., բարձրագույն տեխնիկական ուսումնական հաստատություն, թանգարաններ, խոշոր գրադարաններ։

Պոդոլիայի ռայոնում կան նաև հետևյալ նշանակալից կետերը.

Տարնոպոլ— ունի 32 հազ. բնակիչ, հացահատիկի և գյուղատնտեսական այլ պրոդուկտների առևտրի կենտրոնն է, յերկաթուղային հանդույց է, զարգացած է շաքարի, ոդու և այլուրի արդյունաբերությունը։

Կոլոմիա— ունի 33,8 հազ. բնակիչ (1931 թ.), զարգացած է մանր և տնայնագործական արդյունաբերությունը

(3 հազար բանվորներ, գերազանցորեն դերձակներ, մանածագործներ, կառուցողներ, հյուսներ)։

Գալիչ—ռուսական հնագույն քաղաք է, X—XII դարերում յեղել է Գալիչի իշխանության կենտրոնը։

Բուչաչ— հնագույն ամրոց, 7500 բնակիչ ունի, կան գինեգործական գործարաններ։

Ռավա Ռուսկա—Լվովի վոյեվոդության գավառական քաղաք է։ Լեհաստանը հափշտակել է 1918 թ.։ Կան փայտաստղոցման ու աղյուսի գործարաններ, անասունի առևտրի խոշոր կենտրոն է։

Վոլին, վորի մակերեսի 30 %-ը համարյա թե ծածկված է անտառներով, կան չհետազոտված հանածոների ահագին պաշարներ։ Զարգացած է անտառային տնտեսությունը և հացահատիկի մշակությունը (հաճար, գարի և ցորեն)։ Ունի չնչին արդյունաբերություն, վորը գերազանցորեն վերամշակում է գյուղատնտեսական հումքը,— շաքարի, գարեջրի և անտառային արդյունաբերություն։ Տրանսպորտը չափազանց թույլ է զարգացած— յերկաթուղիների և խճուղիների խտությունը 2 անգամ ցածր է, քան թե Լեհաստանի ուրիշ ռայոններում։ Բնակչության խտությունը՝ 47 մարդ մեկ քառակուսի կիլոմետրի վրա։

Առևտրա-արդյունաբերական ամենից ավելի խոշոր կենտրոնները հանդիսանում են.

Լուցկը — ուկրաինական հնագույն քաղաք է, վորի մասին հիշատակվում է դեռ 1075 թ. տարեգրի մեջ, XII—XIII դարերում Վոլին-Գալիչի իշխանության կենտրոնն է յեղել, այժմ 21 հազ. բնակիչ ունի. փայտի և հացահատիկի առևտրի կենտրոն է, կա թույլ զարգացած արդյունաբերություն՝ չուգունի, մահուդի և կաշվի մանր ձեռնարկություններ։

Ռովնո— ունի 20 հազար բնակիչ, յերկաթուղային խոշոր հանգույց է, կան մեքենագործական մի քանի մանր ձեռնարկություններ։

Դուբնո— ունի 10 հազ. բնակչություն (մինչև 1914 թ. պատերազմը, յերբ այդ քաղաքը մտնում եր Ռուսաստանի կազմի մեջ, բնակչության թիվը անցնում եր 25 հազ. մարդուց)։ Վոլինի հնագույն քաղաքն է, հայտնի յեր XI—XII

դարերում։ XVIII դարում, յերբ Լվովից այստեղ տեղափոխվեց առևտրականը, Դուբնոն Արևմտյան Յեվրոպայի հետ առևտրի խոշոր կետ եր հանդիսանում։ Այժմ Դուբնոն գյուղական առևտրի կենտրոնն է, արդյունաբերություն համարյա թե չունի, յեթե չհաշվենք կաշվի, սապոնի և փայտաստղոցման մանր ձեռնարկությունները։

Կովել— ունի 20,8 հազար բնակիչ, յերկաթուղային հանգույց է, կան կաշվի և ուրիշ մանր ձեռնարկություններ։

Վլադիմիր-Վոլինսկի— ընկած է Լուգ գետի ափին, Վոլինի վոյեվոդության գավառական քաղաքն է, ունի 12 հազ. բնակիչ, կան փայտամշակման ֆաբրիկաներ. ռուսական ամենահնագույն քաղաքներից մեկն է, մի ժամանակ յեղել է Վոլին-Գալիչի իշխանության մայրաքաղաքը։

Ոստրոգ— Վոլինյան վոյեվոդության քաղաքն է, ունի 13 հազ. բնակիչ, կան կաշվի գործարաններ։

Վոլինի բոլոր քաղաքները կրում են հետամնացության և այլասերման կնիք—վորը լեհական հափշտակիչների դաղութային քաղաքականության հետևանքն է։

Արևմտյան Ուկրաինան, վորը մինչև դարերում յեղել է ռուս-ուկրաինական ամենաառաջավոր պետություններից մեկը, տնտեսական զարգացման, ծաղկող ագրարային-արդյունաբերական յերկրի վերածվելու մեծ հեռանկարներ ունի։ Պատմական բախտը ռուսական վաղեմի այդ տերիտորիան բաժանել եր Ռուսաստանից և նրան զրկել եր այդ հեռանկարներից։

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՂՈՒԹԱՅԻՆ ՃՆՇՄԱՆ ՏԱԿ

Լեհական բուրժուազիան և կալվածատերերը իրենց տիրապետության դրեթե 20 տարիների ընթացքում Արևմտյան Ուկրաինայի վերաբերմամբ անց եյին կացնում բացահայտ թալանչիական դաղութային քաղաքականություն։ Բնական հարստությունների գիշատիչ շահագործում, արդյունաբերության ու տրանսպորտի զարգացման արհեստա-

կան արդելակում, լեհական կալվածատերերի կողմից ուկրաինական գյուղացիության կիսաֆեոդալական կեղեքում և կողոպուտ— սրանումն էր Լեհաստանի «ազգային քաղաքականության» էությունը:

Լեհաստանի անանկացած կառավարողները բացահայտորեն հայտարարում էին, վոր Արևմտյան Ուկրաինան, ինչպես նաև Արևմտյան Բելոռուսիան, վորոնք նույնիսկ պաշտոնապես կոչվում էին «արևելյան կրեսներ» (ծայրամասեր), հանդիսանում են լեհական մագնատների ներքին գաղութը: «Газета Польска»-ն— ֆինանսական կապիտալի օրգանը, բացեիբաց գրում էր. «Արևելյան ազգարային ռայոնները, վորտեղ շատ թույլ և զարգացած արդյունաբերությունը, հանդիսանում են կենտրոնական և արևմտյան վոյեվոդություններում մշակվող արդյունաբերական ապրանքների սպառման շուկա»:

Չնայած բնական նշանակալից հարստություններին և բնակչության համեմատական խտությանը, Արևմտյան Ուկրաինան լեհական պանների տիրակալության հետևանքով հանդիսանում է հետամնաց ագրարային երկիր: Բնակչության 80—90%-ը զբաղված է գյուղատնտեսության մեջ և ապրում է գյուղերում, միայն 10%-ն է զբաղված լեռնահանքային և թեթև արդյունաբերության մեջ:

Լեհական գաղութարարները գիտակցաբար կասեցնում էին արդյունաբերության զարգացումը Արևմտյան Ուկրաինայում: Լեհաստանի կենտրոնական և արևմտյան վոյեվոդություններում, ինչպես այդ մասին բացահայտորեն հայտարարում էր նախկին փոխ-պրեմյեր Կվյատկովսկին, կենտրոնացված էր ամբողջ քարածխային ու մետաղադրծական արդյունաբերությունը, տեքստիլի, չաքարի, ցեմենտի, էլեկտրոտեխնիկական և արդյունաբերության այլ ճյուղերի 80 %-ը, գազային գործարանների և ջրմուղների 80 %-ը, ճյուղավորված երկաթուղային ցանցը, տպարանների, կուլտուրական և ուրիշ հիմնարկությունների 80%-ից ավելին: Իսկ Արևմտյան Ուկրաինայում և Արևմտյան Բելոռուսիայում, միասին վերցրած, գտնվում էր Լեհաստանի արդյունաբերական ձեռնարկությունների ընդամենը 5%-ը: Կենտրոնական ու արևմտյան վոյեվոդությունները, վորոնք

գրավում էին երկրի տերիտորիայի կեսից մի քիչ ավելին, սպառում էին ամբողջ էլեկտրոէներգիայի 93%-ը, արհեստական պարարտանյութերի և գյուղատնտեսական մեքենաների 80%-ը, երկաթի մոտավորապես 85%-ը և սուրճի ու թեյի 95%-ից ավելին:

Ամենից ապշեցուցիչը հանդիսանում է հետևյալ փաստը: 1934 թ. Լեհաստանում արտադրվել էր 2,5 միլիարդ կիլովատ-ժամ էլեկտրոէներգիա,— Արևմտյան Ուկրաինային և Արևմտյան Բելոռուսիային հասավ այդ քանակության 1%-ից պակաս: 1% էլեկտրոէներգիա երկրի 40% տերիտորիայի համար: Կա՞ արդյոք սրանից ավելի լավ իլյուստրացիա լեհական կապիտալիստների թալանչիական քաղաքականության մասին՝ «արևելյան ծայրամասերի» հանդեպ:

Լեհական գաղութարարները լիկվիդացիայի յենթարկեցին արդյունաբերական այն փոքրիկ ոչախները, վորոնք գոյություն ունեին չատ առաջ Արևմտյան Ուկրաինայում: Մինչ պատերազմը այստեղ բավականին ուժեղ զարգացած էր նավթային արդյունաբերությունը, աճում էին ուկրաինական պրոլետարիատի կադրերը: 1913 թ. Դրոգոբիչի ռայոնում հանվում էր 1,004 հազար տոննա նավթ, 1929 թվին՝ 556 հազար տոննա, իսկ 1936 թ.՝ միայն 389 հազար տոննա: Հարյուրավոր գյուղեր նավթ չեն գործածում, իսկ իրենց կողքին գտնված նավթի պաշարները չեն մշակվում:

Այդ նույն պատկերն է տիրում արդյունաբերության նաև ուրիշ ճյուղերում: Քարածխի արտադրանքը կազմում էր 1913 թ. հանույթի 39%-ը, ոգոկերիտինը՝ 54%-ը: Համարյա ամբողջովին լիկվիդացիայի յենթարկված մետաղադրծական արդյունաբերությունը: Վերջին տարիների ընթացքում փակվեցին դինեգործական, ոսլայի և չարապի տասնյակ գործարաններ: Գիշատիչ կերպով վոչնչացվում էին Վոլինի անտառային հարստությունները՝ արտասահման արտահանելու համար, իսկ անտառային արդյունաբերությունը անկման վիճակի մեջ էր գտնվում: Փայտաղոցարանների և փայտամշակման գործարանների հազարավոր բանվորներ տարիներով անգործ թափառում էին:

Վերջին 10 տարվա ընթացքում Արևմտյան Ուկրաինայի արդյունաբերությունը ընդհանուր առմամբ կրճատվեց ավելի քան 40%-ով, իսկ նրանում զբաղված բանվորների քանակը՝ կիսով չափ:

Արևմտյան Ուկրաինայի արդյունաբերության անմխիթարական դրությունը վառ կերպով իլլյուստրացիայի ենթարկվում Վոլինի վերաբերյալ հետևյալ տվյալներով: Առ 1926 թ. հունվարի 1-ը Վոլինի վոյեվոդության մեջ հաշվվում էին ընդամենը 711 գործող և 94 չգործող ձեռնարկություններ լեհական պետության հիմնադրման որից: Գործող ձեռնարկությունների մեծ մասը թեթև արդյունաբերության ձեռնարկություններ են: Սննդի արդյունաբերության մեջ կային 523 գործող ձեռնարկություններ, 43՝ չգործող, փայտամշակման՝ 51 և 12, լեռնային՝ 21 և 22, շինարարական՝ 8 և 10, մետաղամշակման՝ 38 և 4: Գործող ձեռնարկությունների բանվորների ընդհանուր քանակը՝ 5708, վորոնցից 323-ը՝ լեռնային արդյունաբերության և 262-ը մետաղամշակման արդյունաբերության մեջ: Վերջին տարիներում Վոլինում և Արևմտյան Ուկրաինայի ուրիշ ռայոններում արդելված եր առանց ռազմական գերատեսչության թույլտվության նոր ձեռնարկություններ բաց անել:

Արևմտյան Ուկրաինայում լեհական հափշտակիչների 20 տարվա տիրակալության որով նոր ճանապարհներ, հեռախոսային գծեր և այլն չեն կառուցվել: Քաղաքների և ավանների կոմունալ տնտեսությունը բարձրթողի յեր արված:

Լեհական պանների դաղութային քաղաքականությունը բնական ռեսուրսներով հարուստ յերկրամասի արդյունաբերությունը հասցրեց մինչ դեդրադացիայի, մինչ լիակատար թուլացման: Գոյություն ունեցող արդյունաբերության մեջ տիրակալում եր լեհական և ռուսերկրյա (հատկապես նավթային արդյունաբերության մեջ՝ 86%) կապիտալը: Լեհական կառավարությունը վոչ մի միջոցի առաջ կանգ չեր առնում, վորպեսզի կասեցներ տեղական արդյունաբերության զարգացումը: Այդ քաղաքականության կարևորագույն գենքերից մեկն, որինակ, յերկաթուղային բարձր

տարիֆներն եյին, վորոնք Արևմտյան Ուկրաինային զբաղկում եյին շուկայի հետ կապվելուց: Փայտի տրանսպորտը 200 կիլոմետրից ավելի տարածության վրա դերազանցում եր նրա գնին, իսկ հացահատիկի տեղափոխությունը արևելքից արևմուտք կազմում եր նրա արժեքի 70%-ից ավելին:

Անբաժանելիորեն դերիշխելով Արևմտյան Ուկրաինայի արդյունաբերության մեջ, լեհական կապիտալիստները ուկրաինական և հրեական բանվորներին յենթարկում եյին դազանային շահագործման: Բանվորական որը հասնում եր 12—14 ժամի, տիրող քմահաճույքն անսահման եր: Վոլինի և Արևմտյան Ուկրաինայի ուրիշ վոյեվոդություններում բանվորի միջին աշխատավարձը միջին հաշվով յերկու անգամ ավելի ցածր եր Վարշավայի վոյեվոդության լեհ բանվորի աշխատավարձից:

Աշխատանք ուներ բանվորների միայն աննշան մասը: Բանվորների հսկայական մեծամասնությունն այնպիսի ճյուղերում, ինչպիսին կարի, կաշվի և ուր.—գործազուրկ եր: Կրիզիսի տարիներին (1929—1934) անցկացրած գործազրկության համար նպաստի իրավունքով ոգտվողների կոնտինգենտի սահմանափակումը ամենից շատ հարվածեց Արևմտյան Ուկրաինայի բանվորներին: Այնպիսի քաղաքներում, ինչպիսին Լուցկը, Ռովնոն և ուր. են, գործազուրկների միայն 5—10%-ն եր ստանում խղճուկ նպաստ: Հազարավոր վորակյալ բանվորներ և յերիտասարդություն հարկադրաբար ուղարկվեցին «հասարակական աշխատանքների», վորոնք ռազմական նշանակություն ունեցին, որինակ՝ Դուբնո—Ռովնո—Լուցկ գծի ռազմական ամրությունների շինարարության վրա, վորպիսի ամրությունները նկատի եյին առնված ԽՍՀՄ դեմ պատերազմելու համար: «Աշխատանքային ճամբարներում» գործազուրկները սովահար եյին լինում և մահանում հիվանդություններից:

Բանվորների դրության մասին, հազարավոր գործազուրկների տառապանքների մասին ամենից լավ պատմում են իրենք՝ այժմ ազատագրված Արևմտյան Ուկրաինայի քաղաքների և ավանների բանվորները:

«Լեհաստանում բանվորի համար անտանելի ծանր եր

ապրելը,— պատմում էր լեհ ռազմագերին Կարմիր Բանակի № զորամասի մարտիկներին.—Յես ծնվել և ապրել եմ Ստանիսլավով քաղաքում: Իմ ազգանունը Զայնաչկովսկի է: Յես 29 տարեկան եմ: Իմ ամբողջ յերիտասարդ տարիներին յես չեմ տեսել լավ, մարդկային կյանք: Մշտական զործազրկություն, կարիք, սով, իրավազրկություն: Մի անզգուշ խոսքի համար— 6 տարի բանտարկություն, ծեծ և դանակոծում: Յես ինքս 2½ տարի զործազուրկ եմ յեղել: Աշխատանք փնտռելու համար յես ընտանիքով թափառել եմ քաղաքից քաղաք, ապրել եմ մեծ կարիքի մեջ»:

Տարնոպոլի դերձակուհի-բանվորուհի Յենյա Պիլնելը ասում էր կարմիր-բանակայիններին. «Յես ուզում եյի սովորել, բայց ուսման համար հարկավոր էր վճարել 15—20 զլոտի: Յես չաբաթվա մեջ վաստակում եմ միայն 12 զլոտի: Ել ի՞նչպես կարող եմ յես սովորել»: 10-ժամյա աշխատանքից հետո Պիլնելը ոգնում է մեքենավար-հորը, վորն աշխատում է չաբաթվա վորոշ որերին: «Յես նշանած ունեմ, բայց նա զործազուրկ է: Մեզ չի կարելի ամուսնանալ»,—մորմոքված սրտով պատմում էր աղջիկը:

Իսկ Ռովնոյի գավառի մի ավանի հյուսն, վորը մի քանի տարի զործազուրկ էր մնացել, ծխելով կարմիր-բանակայինի առաջարկած ծխախոտը, ասաց. «Այսպիսի ծխախոտ յես չեմ ծխել իմ ամբողջ կյանքում: Մեզ մոտ մի ութերորդ մախորկայի համար հարկավոր է աշխատել կես որ: Ինչ ծխախոտ—ինչ բան: Յես ամբողջ տարին լուցկի չեմ տեսնում, ոգտվում եմ կայծքարով: Տանը աղ չկա: Մոռացել ենք, թե յերբ ենք ոճառով լվացվել»:

Նույնիսկ լեհական կառավարական ատիճանավորները ստիպված եյին բացահայտորեն հայտարարել, թե Արևմտյան Ուկրաինայում բանվորական ընտանիքները սիստեմատիկաբար թերասնվում են, բանվորների սպառումն ընկնում է:

Ահա թե ինչ է գրում աշխատանքի տեսուչ Գալինա Կրաչելսկայան, վորը հետազոտել էր Լվովի վոյեվոդության բանվորների դրությունը, 1934 թ. Լվովում լույս տեսած «Правда об условиях труда» գրքում:

«Սննդի ծախսերը կլանում եյին բանվորական (միջին

աշխատավարձ ստացող) ընտանիքի բոլոր ծախսերի 66%-ը... Բյուջեյի այդպիսի կառուցվածքի դեպքում դժվար է զարմանալ, վոր հագուստի, սպիտակեղենի, կոշկեղենի ծախսերը 12%-ից չեյին գերազանցում, կուլտուր-լուսավորական կարիքների, հասարակական կազմակերպությունների համար կատարված ծախսերը կազմում եյին միայն 0,6%... Միջին տարեկան սպառումը 1927—1928 թ. թ. (դեռևս մինչև կրիզիսը) մեկ մարդու համար՝ կիլոգրամներով հաշված.— թեյ—0,07, յուղ— 1, ճարպ— 8, միս, ձուկ և ուր.— վոչ լրիվ 19 կիլոգրամ: Սրանք եյին ամենալավագույն կոնյունկտուրային տարվա սպառման նորմաները: Կրիզիսի ազդեցության տակ համարյա բոլոր մթերքների սպառումը ուժեղ կերպով նվազեց: Որինակի համար մատնացույց կանեմ, վոր հաբարի զործածումը ազգաբնակության ամեն մի շնչի համար նվազեց 2 կիլոգրամով: Կարելի յե վճռականորեն պնդել, վոր բանվոր դասակարգի սպառումը նվազեց ավելի քան կիսով չափ: Հաճախ բանվորի ընտանիքում յերեխաները բոլորովին չգիտեն, թե ինչ բան է և ինչ համ ունի հաբարը»:

Բանվորների դրությունը հետազոտող մեկ ուրիշը՝ Կրժիվիցկին դեռևս մինչև կրիզիսը գրում էր. «Յեթե վոր մենք ուղենայինք գտնել մի յերկիր, վորն ամենից մոտ լիներ մեզ բանվորական բյուջեյի կառուցվածքի տեսակետից, ապա, վորքան ել դա պարադոքսային թվար,—դա Բոմբեյի հնդիկ բանվորի բյուջեն է»:

Անտանելի շահագործումը, ազգային հրեշավոր ճնշումը, ֆաշիստական իշխանությունների հետապնդումները բանվորներին պայքարի եյին մղում իրենց տնտեսական ու քաղաքական ազատագրության համար: 1923 թ. Գերմանիայում տեղի ունեցող հեղափոխական դեպքերի և Կրակովում բռնկված ապստամբության ազդեցության տակ ամբողջ Արևմտյան Ուկրաինայում առաջացան բանվորների մասսայական զործադուլներ և քաղաքական ցույցեր: Տընտեսական զործադուլները— տեղական և ավելի լայն մասշտաբի—չընդհատվեցին մինչև վերջին ժամանակները: Իսկ 1936 թ. Արևմտյան Ուկրաինայի կենտրոնում— Լվովում տեղի ունեցան դեպքեր, վորոնք ալեկոծեցին ամբողջ յեր-

կիրը և արձագանգ գտան նրա սահմաններից շատ հեռու։ Խոսքը վերաբերում է Լվովի բանվորների քաղցի ցույցին, որը վերածվեց զինված ընդհարման վոստիկանության և ժանդարմերիայի խոշոր ջոկատների հետ։ Վոստիկանությունը ցուցարարներին դիմավորեց հրացանների և գնդացիրների համազարկով։ 20 սպանված և հարյուրավոր վիրավորվածներ — ահա ֆաշիստական կառավարության պատասխանը ոգնության առթիվ գործադուրկների արած դիմումին։ Բարիկադային մարտերը Լվովում շարունակվեցին յերկու որ։ Բանվորներին պաշտպանեցին քաղաքի աշխատավորները և մերձակա գյուղերի գյուղացիները։ Լվովյան գնդակահարությունը ալեկոծեց ամբողջ Լեհաստանը։ Բողոքի ընդհանուր գործադուլին, որը պատասխան եր Լվովում տեղի ունեցած դեպքերին, մասնակցություն ունեցան հարյուր-հազարավոր բանվորներ, ծառայողներ, գյուղացիներ և աշխատավոր ինտելիգենցիան։

ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՆԵՐԻ ԼԾԻ ՏԱԿ

Լեհական իմպերիալիստների գաղութային քաղաքականությունն ամենից կործանարար կերպով անդրադարձավ Արևմտյան Ուկրաինայի տնտեսական հիմնական բազայի՝ գյուղատնտեսության վրա։ Աղքատություն, քայքայում, սով, ֆեոդալական կեղեքում, մահացում և լիակատար վայրենացում—այս եր ուկրաինական բազմամիլիոն գյուղացիության վիճակը պանական Լեհաստանում։

Լեհական կալվածատերը ուրկրաինական գյուղում անսահմանափակ տիրակալ եր։ Արևմտյան Ուկրաինայի հողային տարածության կեսից ավելին՝ 52%-ը պատկանում եր պաներին։ Ստանիսլավովի վոյեվոդության մեջ լեհական 630 կալվածատերեր տիրում եյին ամբողջ հողի մոտ 60%-ին, այն ժամանակ, յերբ 200 հազարից ավելի մանր գյուղացիական տնտեսություններ ունեյին միայն հողային տարածության ¼-ից մի քիչ ավելին։ Խոշոր մագնատ-կալվածատերերի կալվածքները գրավում եյին յերբեմն ամբողջ գավառներ։ Կոմս Զամոյսկու կալվածքը փռվում եր 60 հազ. հեկտար տարածության վրա և գրավում եր 5 գավառ. 30 հազար հեկտարից ավելի՝ գտնվում եր իշխաններ Լյուբոմիրսկու, Զարտորիյսկու, կոմս Պոտոցկու և ուր. տիրակալության տակ։ Իսկ գյուղացիությունը պատսպարվել եր մանր հողակտորների վրա, տառապելով հողազրկությունից և հողաստակավությունից, ատելությամբ հայացքը հառելով տիրական հսկայական կալվածքներին։

Գյուղացիական տնտեսությունը դաճաճային տնտեսություն է։ Արևմտյան Ուկրաինայի գյուղացիական բոլոր տնտեսությունների 50%-ից ավելին մշակում են վոչ ավելի, քան 2 հեկտար հող։ Առանձին գավառներում դաճաճային տնտեսությունների տոկոսն ավելի բարձր է։ Ահա, որինակ, պաշտոնական տվյալներ Ստանիսլավովի վոյեվոդության մեջ հողերի բաժանման մասին. 1921 թ. տնտեսությունների ընդհանուր թվից (236988) 76,5%-ն ուներ 0—2 հեկտար, 24,2%-ը՝ 2—5 հեկտար, 5,9%-ը՝ 5-ից մինչև 10 հեկտար, 1,5%-ը՝ 10-ից մինչև 20 հեկտար, 0,5%-ը՝ 20-ից մինչև 50 հեկտար, 0,1%-ը՝ 50-ից մինչև 100 հեկտար, 0,3%-ը՝ 100-ից ավելի հեկտար (մինչդեռ խոշոր կալվածատերերի ձեռքին գտնվում եր վոյեվոդության ամբողջ հողային տարածության 56,3%-ը)։ Այսպիսով, Ստանիսլավովի վոյեվոդության մեջ 91,7%-ը դաճաճային և մանր տնտեսություններ են։

Արևմտյան Ուկրաինայի գյուղացիները չափազանց քիչ հող ունեյին։ Բայց այդ հողն ել ամենից վատն եր։ Ամենից ավելի հարմար և բերքատու հողամասերը պատկանում եյին կալվածատիրոջը։ «Հողաշինարարության» ոգնությամբ գյուղացիներին ստիպանարար քշում եյին ամենից վատ հողերի վրա։ Արևմտյան Ուկրաինայի մի քանի ռայոններում (հատկապես Գալիցիայում) գյուղացիական հողն այնքան վատ է, որ համարյա վոչ մի բերք չի տալիս։

Գյուղացիներն անտառներ ու արոտավայրեր չունեն։ Արևմտյան Ուկրաինայի արոտավայրերի և մարգագետինների նշանակալից մասը, ամբողջ անտառային տարածության գերակշռող մասը (մոտ 95%-ը) պատկանում եր կալվածատերերին և պետությանը։ Գյուղացին հարկադրված եր տրկության գնալ կալվածատիրոջ մոտ, վորպեսզի վառելիք, անտառանյութ և արոտավայր ստանար։ Գյուղա-

ցիների և կալվածատերերի միջև այս հողի վրա մշտապես բազմաթիվ կոնֆլիկտներ էին տեղի ունենում:

Արևմտյան Ուկրաինայի գյուղացիությունը վոչ միայն սակավահող, այլ նաև ձիազուրկ է: Գյուղացիական տնտեսությունների Դեսից ավելին ձիեր չունեն, 25—30%-ն ունեն միայն մի ձի: Վոլինի ռայոններում ձիազուրկ և մի ձի ունեցող տնտեսությունների տոկոսը հասնում է մինչև 86-ի: Այստեղ լեհական պանները գերազանցեցին ցարական Ռուսաստանին: Ռուսական գյուղում ձիազուրկ տնտեսությունները կազմում էին 29,2%, մի ձի ունեցողները՝ 30,3%: Հնարավորություն չունենալով մշակելու նույնիսկ իր գաճաճային հողաբաժինը, ձիազուրկ գյուղացին, ճարը կտրած, ստիպված եր գնալ խոնարհվելու կալվածատիրոջը և կուլակին: Գյուղացիության ծանր դրության մասին վկայում է նաև մեծ քանակությամբ կովազուրկ տնտեսությունների առկայությունը: Ստանիսլավովի վոյեվոդության մեջ տնտեսությունների մոտ մի չերրորդ մասը կովեր չունեն, կեսն ունի միայն մեկական կթու կով:

Լեհական դաղութարարները մատը մատին չխփեցին գյուղացիության դրությունը թեթևացնելու և հողային սովը մեղմացնելու համար: Ճիշտ է, 1919—1920 թ.թ., հեղափոխությունից վախենալով, լեհական կառավարությունը ընդունեց «հողային ռեֆորմի» որենքը և խոստացավ գյուղացիներին բաժին հանել կալվածատիրական հողերից: Իրականում «հողային ռոֆորմը» ուկրաինական գյուղացիությանը հասցրեց ե՛լ ավելի մեծ ստրկացման: Գյուղացիներն առանց հետգնման վոչ մի հեկտար հող չստացան: «Ռեֆորմից» չահեցին միայն կուլակները, իսկ կալվածատերերը պետության և բանկերի ողնությամբ չահավետ գործարք կատարեցին— բարձր գնով վաճառեցին իրենց համար անպետք հողերի ավելցուկները: «Ռեֆորմի» հետևանքով ծախված ամբողջ հողի մեծ մասը (մոտ 2 միլ. հեկտար) ընկավ կուլակների և այսպես կոչված «ոսադնիկների» ձեռքը: «Ոսադնիկները»—դրանք՝ լեհական դաղութարարներն են, վորոնք արհեստականորեն բնակեցվել են պետության արևելյան ծայրամասերում, այսինքն՝ Արևմտյան Ուկրաինայում և Արևմտյան Բելոռուսիայում:

Ծառայությունը վերջացրած սպաները և յենթասպաները— Պիլսուդսկու լեգիոնների և 1920 թ. հակախորհրդային արշավանքի մասնակիցները, կուլակների տղաները ուկրաինական գյուղացիների հաշվին ձրիաբար հողամասեր էին ստանում:

«Ոսադնիկական» այդպիսի տնտեսությունների թիվը Արևմտյան Ուկրաինայում հասնում է մոտ 10 հազարի: «Ոսադնիկներին» բնակեցնելով արևելյան վոյեվոդությունների մեջ, լեհական պանները հենարան էին ստեղծում՝ բազմաչարչար ուկրաինական գյուղացիությանը ճնշելու համար: Սակավահող գյուղացիներին բաժին ընկավ միայն «ռեֆորմի» հետևանքով վաճառված հողերի փոքրիկ մասը, բայց սրա պատճառով նրանք պարտքի տակ ընկան, վորը պետք է վճարեին տասնամյակների ընթացքում:

Հողի գներն անընդհատ աճում էին: Լյուբլինի վոյեվոդության մեջ 1935 թ. մեկ հեկտար հողի գինը կազմում եր 5 հազ. զլոտի: Լվովի վոյեվոդության Ռժեշովի դավառում 1927 թ. մեկ հեկտար հողի գինը կազմում եր 51 ցենտներ հաճար, իսկ 1933 թ., հացահատիկի գների անկման հետևանքով՝ 182 ցենտներ հաճար: Այդ դավառում հաճարի բերքը ամենից լավ բերքատվության ժամանակ կազմում եր 10,3 ցենտներ: Նշանակում է, միայն նրա համար, վորպեսզի գյուղացին մեկ հեկտար հողի գին վճարի, նա պետք է տար 17 ու կես տարվա հավաքած հաճարը: Իսկ յեթե դրան ավելացնենք, վոր չնչին հողակտոր ձեռք բերելու համար գյուղացին պարտք վերցրած դրամի տոկոսներ պետք է վճարեր և նոր հողամասի վրա ծախքեր կատարեր, ապա հասկանալի յե դառնում վոր սակավազոր գյուղացու համար հող գնելը նշանակում եր հետագա քայքայում և ստրկացում: «Հարյուրավոր ու հազարավոր մարդիկ, վորոնք գնել են մանր հողամասեր, խեղդվեցին պարտքերի մեջ, պարտքեր, վոր չեն կարողանա վճարել վո՛չ իրենք, վո՛չ նրանց յերեխաները, վո՛չ թոռները, վո՛չ էլ նրանց ծոռները»,—գրում եր «Вызволене» թերթը:

Աղքատային «ռեֆորմը» լիկվիդացիայի չենթարկեց հողային սովը: Ընդհակառակը, այն դարձավ ե՛լ ավելի սուր:

«Ռեֆորմը» գյուղացիության նկատմամբ հերթական կողոպուտ հանդիսացավ:

Այսպիսին էին լեհական իշխանավորների նաև մյուս միջոցառումները: Կառավարության կողմից անցկացրած «հողաշինարարությունը» փաստորեն հասցրեց չքավոր ու մթնաք գյուղացիների նոր կողոպտման՝ ի շահ կուլակային խուտորային տնտեսությունների: Տասնյակ տեղերում ցրված գյուղացիական հողաբաժինների միջով անց էին կացվում ճանապարհներ, գերազանցորեն իհաշիվ չքավոր գյուղացիության հողերի: Լավագույն հողամասերն անցնում էին կուլակներին, իսկ ամենավատ հողերը մնում էին նրանց, ովքեր միջոցներ չունեցին խուտոր տեղափոխելու: Հողաշինարարության ժամանակ գյուղացիներից վերցրին մարգագետինները: Գյուղացիական զաճաճային տնտեսությունները ի վիճակի չէին ծածկել այն նոր հողամասերի յուրացման ծախսերը, որոնք նրանց բաժին էին ընկել «հողաշինարարության» հետևանքով: Հողաշինարարական աշխատանքները հաճախ հասցնում էին հողի ուժասպառության: Գյուղացիական տնտեսությունների պարտքն այն ռայոններում, որտեղ հողաշինարարություն եր անցկացվում, աճեց 4—5 անգամ:

Ոգովելով հողերի մենաշնորհից, լեհական կալվածատերերը գյուղացիությանը խճճում էին ֆեոդալական մնացուկների ցանցով:

Գյուղացին խեղդվում եր իր չնչին հողաբաժնի վրա և ստիպված եր կապալով հող վերցնել կալվածատիրոջից, իսկ դրա համար իր ընտանիքի հետ միասին գնալ աշխատելու նրա մոտ: Արևմտյան Ուկրաինայի ռայոններում տարվա մեջ աշխատավճարում են 15—20 որ, այն էլ ամառային աշխատանքների ամենայեռուն ժամանակ: Հաճախ գյուղացիական ընտանիքը տարվա մեջ աշխատավճարում է 50—60 որ: Գյուղացին տեղ չունի անասուններն արածացնելու համար—պանները նրա արոտավայրերը խլել են, նա գնում է կալվածատիրոջ մոտ: Իսկ մարգագետնի կապալի կամ կալվածատիրական արոտավայրում կովին արածացնելու իրավունքի համար գյուղացիական ընտանիքը աղայի ոգտին վճարում է աշխատանքով: Մի քանի ռայոններում մեկ կովը՝ մայիսից նոյեմբեր արածացնելու համար գյուղացիները կալվածատիրոջն աշխատավճարում են 35-ական որ: Գյուղացին անասունների համար կեր չունի—նա այն վերցնում է կալվածատիրոջից աշխատավճարով: Վորպեսզի կալվածատիրական անտառից մի քիչ վառելափայտ ստանա, գյուղացին սեփական ձիով վարձվում է անտառային աշխատանքների: Աշխատավճարում էին կալվածատիրոջը՝ անտառում պտուղներ հավաքելու, կալվածատիրական ջրհորից ջուր վերցնելու, աղայի հողով անցնելու և այլնի համար:

Արևմտյան Ուկրաինայում խիստ զարգացած եր բնավարձով աշխատանքը: Գյուղացիներն իրենց խղճուկ ինվենտարով մշակում էին կալվածատիրական դաշտը և դրա համար ստանում էին բերքի չնչին մասը: Ստանիսլավովի և Տարնոպոլի վոյեվոդություններում կալվածատիրական կալվածքների համարյա ամբողջ հացահատիկը հավաքում էին գյուղացիները: Կալվածատերերը բերքահավաքի պայմանների մասին գյուղացիների հետ համաձայնության էին գալիս դեռևս ձմեռը, յերբ գյուղացիները ծայրահեղ կարիքի մեջ են լինում: Զքավորը ստիպված եր համաձայնվել ամեն տեսակի պայմանների, միայն թե կանխավճար ստանար հացահատիկով կամ անասնակերով: Վաղովիցկու դավառում գյուղացիները հավաքում էին կալվածատիրոջ հացը՝ բերքի $^1/_{20}$ մասը ստանալու պայմանով:

Աշխատավճարը և բնավարձը կուլակային տնտեսությունների, և հատկապես խոշոր հողատեր հանդիսացող յեկեղեցու կողմից գյուղացիներին շահագործելու սիրված մեթոդն եր: Համարյա ամբողջ յեկեղեցական հողը, որինակ, Գալիցիայում, գյուղացիների կողմից մշակվում եր բնաբերքով վճարելու պայմաններով: Հոգևորականությունը ծիսակատարությունների համար գյուղացիներից փողից բացի վճարներ եր գանձում նաև բնաբերքով և աշխատավճարումներով: «Մեր ծխում,—գրում եր «Вызволене» թերթում մի գյուղացի,—մեռավ մի տնտեսատեր: Վորպեսզի վճարի թաղման ծախսերը, նրա կինն ստիպված եր համաձայնել 20 որ աշխատելու: Մի՞թե միայն նա յե: Մեզ մոտ շատ են այդպիսիները, որոնց, յերբ գալիս է հնձի

ժամանակը, հարկավոր է աշխատավճարել հարստանիքը և թաղումը»:

Շերտընդմիջությունը — գյուղացիական տնտեսության խարազանն է: Արևմտյան Ուկրաինայի հարավային ռայոններում մի տնտեսությանը միջին հաշվով ընկնում է 37 կտոր հող: Հաճախ գյուղացիական տնտեսությունը բաղկացած է լինում 100 փոքրիկ հողամասերից, վորոնք ցրված են կալվածատիրական հողերի միջև և մեմյանցից 5—10 կիլոմետր հեռու յեն գտնվում: Շերտընդմիջությունը արմատավորում է աշխատավճարները, ուժեղացնում է կալվածատիրական կեղեքումը և ստրկությունը:

Կիսաֆեոդալական բնույթի տասնյակ զանազան պարհակները և տուրքերը խեղդում եյին գյուղացիությանը: Գյուղացիությունն առանձնապես տուժում եր, այսպես կոչված, «չարվարներից»: Այդ—պետության և տեղական ինքնավարության ոգտին կատարված աշխատանքային ձրի պարհակն է: Առաջ իշխանությունները «չարվարները» կիրառում եյին միայն կարևոր, առանձնապես ստրատեգիական նշանակություն ունեցող ճանապարհների կառուցումների ժամանակ: Բայց 1935 թ. նոր որենք հրատարակվեց, վորը «չարվարներ» է մտցնում բոլոր տեսակի ճանապարհների կառուցումների համար, դպրոցների և այլնի շինարարության համար: Նոր որենքի հետևանքով «չարվարային» որերի թիվը շատ տեղերում հասնում է տարվա մեջ 100—110-ի: «Չարվարներից» բացի, գոյություն ունեն խճուղային պարհակ, ճանապարհներից անցնելու դանձումներ և այլն:

Ուկրաինական գյուղացիության ստրկացումը կիսաֆեոդալական շահագործման ձևերով լրացվում եր հարկային ուժեղ ճնշումով: Հարկային սիստեմը լեհական պանների դաղութային քաղաքականության կարևորագույն լծակն եր հանդիսանում: Նույնիսկ լեհական բուրժուական տնտեսագետները ստիպված եյին խոստովանել, վոր արևելյան վոյեվոդությունները կրում եյին հարկային ավելի խոշոր ծանրություն, քան մնացածները: Համեմատության համար կբերենք ֆինանսական յերկու ոկրուգների՝ Գրուձենձի և Լուցկի հողային հարկի թվերը (գրոշներով՝ մի հեկտարի համար).

Տնտեսության ծավալը (հեկտարներով)	Գրուձենձ	Լուցկ
Մինչև 5	0,98	1,78
5— 15	1,17	1,44
15— 60	1,25	1,55
60— 150	1,53	1,92
150— 500	2,14	1,58
500—2000	2,35	2,28
2000-ից բարձր	1,34	0,97

Ինչպես յերևում է աղյուսակից, բուն Լեհաստանում Գրուձենձի ոկրուգում, վորտեղ գյուղատնտեսական կուլտուրայի մակարդակը համեմատաբար բարձր է, չքավոր ու միջակ գյուղացիության հարկումը ցածր է, քան Լուցկի ոկրուգում:

Իր ամբողջ ծանրությամբ հարկային լուծը ընկած եր մանր ու միջակ գյուղացիական տնտեսության վրա, շատ թույլ կերպով շոշափելով կալվածատերերին ու կուլակներին: Հողային հարկի $^2/_3$-ից ավելին մուծում եյին չքավորներն ու միջակները: Հողային հարկից բացի Լեհաստանում գոյություն ունեյին տասնյակ ուրիշ հարկեր. գույքային, կոմունալ, ինվենտիցիոն, հավատարարական, ճանապարհային, յեկեղեցական և ծխային հարկեր, արտահանման պարգևների դանձումներ և այլն—ընդամենը 100-ից ավելի զանազան հարկեր ու տուրքեր: Գոյություն ունեյին տուրքեր կովի, խոզի, ձիու, սագի և նույնիսկ շան համար, քահանաների տները պահպանելու դանձումներ և այլն: Յեթե ավելացնենք նաև հրդեհից ապահովագրելու համար կատարվող պարտադիր մուծումները, հարկադրական փոխառությունները, դրամական տույժերը, տուգանքները և այլն, ապա պարզ կդառնա, վոր հարկերի և պարտքերի մուծումների ընդհանուր գումարը շատ ավելի կանցնի գյուղացիական դաճաճային տնտեսության համախառն յեկամտից: Հարկերի ընդհանուր գումարը, վոր Արևմտյան Ուկրաինայում դուրս եր կորզվում գյուղացիներից, 8—10 անգամ շատ եր, քան ցարական Ռուսաստանում:

Հարկերն ու տուրքերը կլանում էին գյուղացիական աղքատիկ տնտեսության բոլոր յեկամուտները: Զուր չե, վոր ուկրաինական գյուղացիները իշխանությունների կողմից արդելված յերգի մեջ յերգում էին.

Через кладку йду на грядку
Тай сі так гадаю—
Чи ще ѳ десь біда гірша,
Ніж в нашому краі?
. . . . . .
Иду до дому, сльозы роню,
Минаю ворота.
Сім податків, три добори,
А грошей—ні злота...

Պետական իշխանության ամբողջ ապարատը շարժման մեջ էր դրվում գյուղացիներից հարկերը գանձելու համար: Հարկերը և պարտքերը գանձելու համար ուղարկվում էր ռազմական ավորների, դատական կատարածուների մի ամբողջ բանակ, մեծ թվով պատժիչ եքսպեդիցիաներ: Նրանք վերդրում և վերցնում էին գյուղացու խղճուկ ունեցածչունեցածը—հացահատիկը, կովերը, հորթերը, ներքնակները, տնային կահույքը: Պարտապանների ունեցվածքը վաճառվում էր աճուրդով: Այն ժամանակ, յերբ չքավոր գյուղացուց խլում էին վերջին կովը՝ հարկերը վճարելու համար, խոշոր կալվածատերերը չեյին մուծում իրենցից հասանելիք գումարները: «Խոշոր հողատերերի 80%-ից վոչ պակասը,—գրում էր անցյալ տարի «Вызволене» թերթը,—չեն վճարել հարկերը 1927 թվից, և անհայտ է, թե ինչպիսի իրավունքի ուժով է, վոր նրանց համար այդ բանն անպատիժ է անցնում: Շատ դեպքերում կալվածատերերին վճարումների մասին ծանուցագրեր չեյին ուղարկվում, հիշեցումների մասին խոսք էլ չկար: Այդ նույն ժամանակ գյուղացիներից վերցվում էին վոչ միայն ձին, կովը, խոզը, տնային թռչունը, այլ հաճախ՝ ներքնակները, բարձերը և այլն»: Իշխան Գչինսկին չեր վճարել 13,5 միլ. ղրոտի հարկը, իշխան Լյուբոմիրսկին՝ 3 միլ. և այլն—Նրանց հետ կառավարությունը գործը «հաչությամբ» վերջացրեց և նրանց պարտքը զուրս գրեց: Միանվագ գույքային հարկը գանձվեց

գյուղացիներից և մանր արհեստավորներից, իսկ կալվածատերերից և խոշոր կապիտալիստներից չգանձվեց 700 միլիոն ղրոտի վոսկով:

Գյուղացիներին կողոպտում էին վոչ միայն կալվածատերերն ու պետությունը, այլ նաև կապիտալիստական խոշոր մոնոպոլիաները: Հսկայական գումարներ էին դուրս կորզվում գյուղից անուղղակի հարկերի (աղի, շաքարի, լուցկու, ծխախոտի և առաջին անհրաժեշտության ուրիշ առարկաների) և արդյունաբերական ապրանքների բարձր գների միջոցով: Սեյմի դեպուտատ Տերշակովեցը իր յելույթներից մեկում բերեց հետևյալ տվյալները՝ արդյունաբերական ու գյուղատնտեսական ապրանքների գների փոխհարաբերության վերաբերյալ.

	1927/28 թ. (կիլոգրամ հաշվով)	1935/36 թ.
1 գութան արժեր	100	276
10 կգր. շաքարն արժեր	36	100
10 կգր. աղն արժեր	8	32
10 կգր. ոճառն արժեր	52	135
10 կգր. կերոսինն արժեր	16	40
1 կգր. ծխախոտն արժեր	141	564

Վերջապես, գյուղացիությունը չլսված կերպով տուժում էր զանազան մոնոպոլիաների՝ այլուրի, հացահատիկի մեծագնման մոնոպոլիայի և ուր. ճնշումից: «Վոր կողմն էլ վոր գյուղացին շարժվի, վոր կողմն էլ վոր նայի,—հայտարարեց սեյմում դեպուտատ Դեմբիցկին,—նրան չբռնաբարում են այնպիսի համաձայնություններ, ինչպիսին անասունների և խոզերի մեծագնորդների համաձայնությունն է, ինչպիսին հացթուխների համաձայնությունն է և այլն»: Մոնոպոլիաների շնորհիվ գյուղացիությունը, լեհական տնտեսագետ Իվաշկեվիչի հաշվարկումներով, իր պրոդուկցիայի համար ստանում է միայն կեսը այն վճարի, վոր գյուղատնտեսական պրոդուկտների սպառողը վճարում է շուկայում: Մնացած կեսը յուրացնում են միջնորդները և վերագնորդները:

Սակավահողությունից չնչասպառ լինելով, ֆեոդալական մնացուկների ցանցով պատած, պարտքերից յերբեք

դուրս չեկող գյուղացիական դաճաճային տնտեսությունները նեռվեցին աղքատության և քայքայման անդունդի մեջ։

1—2 հեկտար ունեցող տնտեսությունն ի վիճակի չէ կերակրելու գյուղացիական ընտանիքը։ Սովորական պայմաններում այդպիսի տնտեսության մեջ—հաճարի կամ ցորենի բերքը կազմում է միջին հաշվով 3,5 ցենտներ։ 5 հոգուց բաղկացած ընտանիքին՝ սնվելու համար հարկավոր է ամենաքիչը 2,5 ցենտներ հաճար։ Մնում է 1 ցենտներ, վորի համար գյուղացին կարող է 10—12 ղլոտի (մեր փողով՝ 2 ռ. 20 կոպ.—2 ռ. 40 կոպ.) ստանալ։ Դա այն ամենն է, ինչ մնում է պարարքերը և հարկերը վճարելու համար, սերմացու և գյուղատնտեսական ինվենտար դնելու համար, անասունների կերի և ուրիշ կարիքների համար։ Իսկ հագուստի, կոշիկի գնո՞ւմը, խրճիթի և ջրհորի վերանորոգո՞ւմը։

Նույնիսկ 2—5 հեկտար ունեցող տնտեսությունն ի վիճակի չէ կերակրելու գյուղացիական միջակ ընտանիքին։ Վերևում հիշված դեպուտատ Տերշակովեցն ընթացիկ տարվա սկզբին բերեց տվյալներ, վորոնք իլյուստրացիայի եյին յենթարկում մանր գյուղացիության դժան կարիքը։ Գյուղացիական սպառման սովորական նորմաներից յելնելով, Տերշակովեցը հաշվեց, վոր 5 շունչ ունեցող գյուղացիական ընտանիքում, վորը մշակում է 3 հեկտարանոց հողաբաժին, հարկերը վճարելուց և առաջին անհրաժեշտության առարկաները դնելուց հետո մնում է տարեկան 749 կիլոգրամ հացահատիկ, վորը գրամական արտահայտությամբ կազմում է 74 ղլոտի։ Դա ընտանիքը պահելու համար որական 20 գրոշ է անում։ Իսկ մի տուփ լուցկին արժեր 10 գրոշ։

«Պտի Պարիզյեն» թերթի թղթակիցը, վորը 1937 թ. շրջագայել է Արևմտյան Ուկրաինայի գյուղերը, նկարագրել է գյուղացու բյուջեն, վորն ունի 3 հեկտար հող։ Ընդամենը նա միջին հաշվով ստանում է 2400 կիլոգրամ հաճար։ Դրանից 1900 կիլոգրամը գնում է հարկերը վճարելու և տնտեսության ամենից անհրաժեշտ ծախսերի և ընտանիքի հագուստի վրա։ Մնում է միայն 500 կիլոգրամ։ Ցեվ գրանով տարվա ընթացքում հարկավոր է կերակրել 7 հոգուց բաղկացած ընտանիքը և հալից ընկած ձին։

Այդպիսի անելանելի կարիքի մեջ եր ապրում ուկրաինական գյուղացիության հսկայական մեծամասնությունը։

Մանր ու միջակ գյուղացիության տնտեսությունը դեպի անկումն եր գնում։ Գյուղական խրճիթները թեքվել եյին ցած դեպի գետինը։ Ժամանակի ընթացքում սևացած, ծուռ, թեքված տանիքներով, կիսախավար փոքր պատուհաններով այդ խրճիթներն արդեն յերկար տարիներ չեյին վերանորոգվել։ Աղքատ ու մերկ եր Արևմտյան Ուկրաինայի գյուղացին։ Կյանքը տարեցտարի դառնում եր ավելի ու ավելի ծանր։ Գյուղացին հույս ուներ, վոր մի վորևե ինվենտար ձեռք բերելով դուցե կհաջողվի հողից ավելի շատ յեկամուտ դուրս քամել, բայց անհնար եր—դրամ չկար։ Արտադրության հիմնական գործիքները — յերկհյուղանի փայտյա արորը և յեղևնու դալար ճյուղերով կապկապված տափանն եյին։ Գութանը և յերկաթյա ատամներ ունեցող տափանը հազվադյուտ եյին։ Գյուղացին դադարել եր յերկաթե կացինը ոգտագործելուց, փոխարինելով այն քարե կացինով։ Նա այլևս յերկաթե մեխեր չեր ոգտագործում, այլ դրանք փոխարինել եր փայտյա մեխերով։ Նա դադարել եր ձիերին պայտելուց, խնայելով յերկաթի ամեն մի կտորը։ Արհեստական պարարտանյութերի գործածումը խիստ կրճատվեց։ Գյուղացիական տնտեսությունը իսկական անկում եր ապրում։ Թերևս, Ցեվրոպայում վոչ մի տեղ, բացառությամբ Իսպանիայի՝ մինչև 1936 թ., չկար այդպիսի հետամնաց գյուղատնտեսություն, այդպիսի ցածր բերք, արտադրության այդպիսի անդրջրհեղեղյան տեխնիկա, վորպիսին Արևմտյան Ուկրաինայումն է։ Բերքի տարիներն ավելի ու ավելի հազվադեպ են դառնում։ Անբերրիությունը, սովը ավելի ու ավելի հաճախ են կրկնվում։ Կերի բացակայությունը պատճառ դարձավ անասունների ավելի շատ կոտորման։ Ուկրաինական «Дило» թերթում հրապարակված նամակի մեջ Արևմտյան Ուկրաինայի Մերձկարպատյան ռայոնի մի գյուղացի գրում եր.

«Համարյա ամեն տարի ձմեռն ու գարնանը մեր յերկրամասում լսվում են հուսահատության հառաչանքներ—«սով է», «կոտորվում ենք»։ Սակայն այս տարի դրությունն այնքան ծանր է, վոր կատաստրոֆան անխուսափելի

յե։ Այս տարվա ապրիլի առաջին յերկու շաբթում կոտորվեց գյուղացիների անասուններից 1562 գլուխ։ 20 հազ.-ից ավելի անասուններ, այսինքն՝ ամբողջ քանակի 40—50%-ը, մինչ այն աստիճան քաղցից հյուծված են, վոր ընկած են դոմերում և ի վիճակի չեն վեր կենալու։ 1937—1938 թ. քնթացքում մեր յերկրամասի Տուրկանսկի դավառում սատակեց 16250 գլուխ անասուն, այսինքն՝ գյուղացիական ամբողջ անասունների 28%-ը։ Անասունների մասսայական անկումը, վորն առաջացել եր անասնակերի բացակայությունից, լիակատար կատաստրոֆ եր նշանակում սակավահող գյուղացիության համար»։

Գյուղացիական ընտանիքը բառացիորեն քաղցում եր, նա մոռացել եր այնպիսի պրոդուկտների գործածության մասին, ինչպիսին շաքարն ու աղն են։ Պաշտոնական վիճակագրության տվյալներով, շաքարի գործածությունը Վոլգայի գյուղերում 1929 թվից պակասել է 93%-ով, աղինը՝ 87%-ով, նավթինը՝ 72%-ով։

Ահա թե ինչ է պատմում Կարմիր Բանակի մարտիկներին գյուղի կյանքի ու կենցաղի մասին Զալեսցի գյուղի մի գյուղացի.

«Մարդկային կյանք յես դեռ չդիտեյի։ Հողի չնչին մի կտոր, և՛լ ավելի փոքրիկ բանջարանոց, մի քանի հավ—ահա իմ ամբողջ անտեսությունը։ Հարկադրված եյի ավելի շատ հարկ վճարել, քան արժեր իմ ամբողջ կայքը։ Պարտքերի տակից յերբեք դուրս չեմ յեկել։

Զբավոր գյուղացիները վաղուց է, վոր նոր հագուստ չեն հագնում։ 18—20-ամյա շատ յերիտասարդներ ամաչում են ցերեկը փողոց դուրս գալ—նրանք հագնելու բան չունեն։ Ցերեկոյան գյուղը համարյա թե լիակատար խավարի մեջ է թաղվում։ Հաղվագեպ է այնպիսի խրճիթը, վորտեղ կրակ է փայլկտում։ Ցեվ այն էլ մարին է մխում։ Նավթի լամպի մասին վաղուց մոռացել են»։

1933 թ. Վարշավայի սոցիալական եկոնոմիկայի ինստիտուտի հրատարակած «Письма крестьян» գրքի մեջ հրապարակված են գյուղացիների պատմածները, վորոնք նկարագրում են աղքատության, սովի և գյուղի անբնական դրության կոշմարային պատկերը։

Ահա թե ինչ է գրում Զամոյսկի դավառի մի գյուղացի.

«Ցես մի խրճիթի մեջ եմ ապրում խորթ վորդուս հետ, վորը թեև բաժանվել է, բայց ապրում է ինձ մոտ, քանի վոր նա իր խրճիթը չունի։ Իսկ ի՞նչ է դտնվում մեր խրճիթում։ Ցերկու մահճակալ, վորոնք ծածկված են կոշտ ադեալներով, սեղան և մեր ձեռքով պատրաստած յերկու աթոռ։ Ահա և ամբողջ կահկարասին։ Այդ խրճիթի մեջ ապրում ենք վեց հոգի։

Ավելի վատ դրության մեջ է սննդի գործը։ Ամառը, յերբ մի քիչ կաթ կա, դեռ այնքան էլ սարսափելի չէ, բայց ահա ինչպես անել, յերբ տանը վոչ մի կաթիլ կաթ չկա, վոչ մի կտոր միս կամ ճարպ չկա, յերբ յուրաքանչյուր խոճկորը, վորը նույնիսկ դեռ չի չաղացել, հարկադրված ես վաճառել, վորպեսզի վճարես հարկերը և ձմեռվա համար կոշիկներ և մի վորևե հագուստ գնես։ Առանց կլոնական վորևե պատվիրանի այնպիսի պաս ես պահում, վոր մինչև դարունը դա և կովը սկսի կաթ տալ, բոլորը չորանում են ինչպես տաշեղներ»։

Նույն դավառի սակավահող մի գյուղացի գրում է.

«Այժմ մենք մեզ զրկում ենք վճռաբար ամեն բանից։ Շաքար մենք չենք գործածում, թերևս միայն մեծ տոներին, աղը խնայում ենք,—այն շատ թանգ է։ Կանայք կրակը տնից տուն են տեղափոխում յերկաթյա պտուկի մեջ, իսկ ամեն մի լուցկին յես բաժանում եմ յերկու, իսկ յերբեմն էլ չորս մասի։ Կերոսինը և լամպը մեզ մոտ գյուղում—չգեղություն է։ Խրճիթները պարզապես լուսավորվում են մաբխերով, իսկ յես դեռ յերազում եյի, թե կապրեմ մինչ այն մոմենտը, յերբ խրճիթում կվառվի էլեկտրականությունը»։

Գրուբեչովսկ դավառի մի ուրիշ գյուղացի գրում է.

«Ֆաբրիկային ապրանքներ մենք ներկայումս բոլորովին չենք գնում։ Մեր հագուստն ամբողջապես կարկատաններով է պատած։ Կոշիկները մենք վերասարքում ենք, մխելով փայտյա պողոշներ, ինչպես անում եյինք համաշխարհային պատերազմի ժամանակ։ Մեր պահանջմունքը տարեցտարի անհրաժեշտ առարկաների նկատմամբ չափազանց

մեծ է, դժվար է նույնիսկ թվել այն ամենը, ինչ անհրաժեշտ կլիներ դնել...

Գյուղացին հարկադրված է հետ վերադառնալ դեպի նախապատմական ժամանակները, հաղնել վուշից և կանեփից իր ձեռքով պատրաստած հագուստ և լինել դերձակ ու կոշկակար: Զիով մենք կորում-անցնում ենք 200 և ավելի կիլոմետր, վորովհետև մեզ համար յերկաթուղին անմատչելի յե»:

Իսկ ահա թե ինչ է գրում Լվովի վոյեվոդության Ժեշեվսկի գավառի սակավահող մի գյուղացի.

«Մինչև 1932 թ., չնայած կրիզիսին, յես մի կերպ դիմանում եյի: Բայց հիմա յես արդեն հասել եմ լիակատար հուսահատության: Սպառվել են բոլոր խնայողությունները: Մենք նեռված ենք աղքատության ամենախոր հատակը: Խրճիթում մութն է, գյուղացու հոգու մեջ եյ մութն է, վորովհետև վոչ մի տեղից նա փրկություն չի սպասում: Ի՞նչ կարող եմ ասել յես իմ մասին, իմ ապագայի մասին. հենց նրա մասին մտածելը ինձ ցավ է պատճառում, դրա համար եյ ավելի լավ է չմտածել: Ցուրտ է, կոշիկ չկա, տաք հագուստ չկա՝ վոչ ինձ և վոչ եյ յերեխաներիս համար: Խրճիթը փուլ է գալիս, ջրհորը քանդվել է, տեղ չկա ջուր վերցնելու: Այդ բոլորի համար փող վո՞րտեղից վերցնել»:

Տարնոպոլի վոյեվոդության Բուչացկի գավառի գյուղացին այսպես է նկարագրում իր ամենորյա տառապանքները.

«Տնտեսությունը—դա գյուղացու արհեստանոցն է, վորը այժմ դարձել է բեռ, վորովհետև ծախսերն ավելի շատ են, քան յեկամուտները: Իսկ ի՞նչ է տեղի ունենում սակավահող գյուղացու տնտեսության հետ: Չնայած բոլոր ջանքերին, ամբողջ աշխատանքին, այն անկման մեջ է:

Վաղ թե ուշ գյուղացին անպայմանորեն պետք է ընտեսական շենքեր կառուցի: Դրամի պակասության պատճառով նա այդ շենքերը կառուցում է վատ և վոչ հաստատուն: Դեռ մեկը չկառուցած, մյուսն արդեն փլվում է... Գոմերի և փարախների հատակը հաճախ փչանում է, իսկ չի՞ վոր չի կարելի թույլ տալ, վոր անասունը ցեխի պատճառով փչանա: Մինչդեռ վոչ միայն տախտակ, այլև մեխեր դնելու համար դրամ չկա: Անասունները բազմացնել անհնարին է, չբազմացնել—ավելի՞ վատ: Խրճիթների հատակները սովորաբար հողից են և վոչ թե տախտակից: Նեխած ու խոնավ է: Գոմերն եյ այդպիսին են, իսկ ամբարները հաճախ առանց պատերի յեն, վորովհետև փող չկա շինարարական մատերիալ դնելու համար... Շները բներ չունեն, չունն ախոռ է, բայց ինչ արած: Վոզորմելի արտաքնոցը տախտակից եր, այժմ նա դարմանից է, իսկ այդ տախտակներից սեղան պատրաստեցինք, հետո այդ սեղանից՝ փարախի դռներ, վոր վերջը խոզը կրծոտեց: Յեվ կերակին պետք են սեղանն ու դռները, հարկավոր է փող պարտք վերցնել և դնել, վորովհետև խոզը փարախից դուրս է գալիս: Ամբողջ տնտեսությունն ունի միայն մեկ վեղրո: Այդ վեղրոյով ջուր ես կրում խոհանոց, ջրում ես ձիուն ու կովին, հենց նույն վեղրոյի մեջ եյ խոզերին կեր ես տանում, նույն վեղրոյով եյ ընտանիքի համար ջրհորից ջուր ես հանում: Սայլակը փտում է և դուրթանը ժանդոտում է անձրևի տակ, վորևե տեղ չկա նրանց համար—սարայ չկա, իսկ այն կառուցելու եյ փող չկա: Խոզի համար հարկավոր է կեր պատրաստել, պատրաստելու ման չկա: Ստիպված ես պատրաստել նույն այն ամանի և պուտուկների մեջ, վորոնց մեջ կերակուր ես պատրաստում քեզ համար:

Իմ լուսամուտի ապակիները ջարդված են, նույնը նաև դռմումն է: Տա՞ս ցուրտ կրերի քամին, մինչև վոր յես ապակի կճարեմ:

Այդպիսի գանգրան մասերից է կուտակվում կարիքը»:

Յեզրակացության մեջ գյուղացին հայտարարում է.

«Սա մի մեղք է, վոր յերկնքի հանդեպ վրիժառություն է աղաղակում: Հացը լիառատ է, իսկ մենք, գյուղացիներս—կիսաքաղց ենք, իսկ կան նաև բոլորովին քաղցածներ: Լեհաստանում հագուստը, կոշիկը և վառելիքը շատ է, իսկ մենք մրսում ենք, և մեզ կրծոտում է կարիքը: Մենք խոնավ խրճիթներում կիսամերկ դողում ենք ցրտից: Մեզ զրկեցրել է աշխատանքը, վորը մենք մի ժամանակ սիրել ենք մեր կյանքից ավելի:

Բնությունը, վորը մշտապես մեզ վողջունել է արևա-

ծաղի հետ, հիմա այլևս մեզ չի ժպտում: Այլևս կյանք չկա, հույսը հանգել է»:

Այսպես էր ուկրաինական գյուղը պանական լեհատա-նում: Զքավորական ու միջակային գյուղացիական տնտե-սությունը աղքատանում էր, գյուղական բնակչությունը քաղցում էր:

Մշտական թերասնումը, ցուրտն ու սովը հասցրին ֆի-զիկական ուժասպառության և հիվանդությունների աճման: Արևմտյան Ուկրաինայի գյուղերում մոլեգնում է տուբեր-կուլոզը: Համաճարակները տանում են մարդկային հազա-րավոր կյանքեր: Լեհական դաղութարարները, գյուղը հա-մարյա թե թողել էին առանց բժշկական վորևե ոգնու-թյան: Արևմտյան Ուկրաինայում 9 հազ. բնակչին մի բժիշկ է ընկնում: Բժշկական ոգնությունը միանգամայն անմատչելի է գյուղացիներին:

Ահա թե ինչ էր գրում 1938 թ. սկզբին «Роботник» թերթը.

«Գյուղում, իբրև կանոն, վոչ վոք չի բժշկվում: Գյու-ղացիները կարիքի պատճառով զրկված են բժշկին դիմելու հնարավորությունից, մանավանդ վոր բժիշկը հեռու է ապրում: Նրա մոտ ընկնելու համար հարկադրված ես ձիեր վարձել: Բացի դրանից վստահ չես, վոր բժիշկը կհամա-ձայնի դալ այդքան հեռու: Յեթե նույնիսկ գյուղացին բժիշկ հրավիրի, ապա նա դրամ չունի դեղորայք գնելու: Զքավոր և նույնիսկ միջակ գյուղացիների համար այդ դժվարություններն անհաղթահարելի են: Ծննդական կա-նանց ոգնություն բոլորովին ցույց չի տրվում, մինչդեռ այն չափազանց անհրաժեշտ է, վորովհետև նրանց մեծ մա-սը հյուծված, առողջությամբ թույլ կանայք են, վորոնք մանկության ժամանակ ռախիտ են ունեցել: Այստեղից էլ մահով վերջացած ծննդաբերությունների քանակի հսկայա-կան աճում: Գյուղը միանգամայն անոգնական է այդ չա-րիքի հանդեպ, վորը աղքատության հետևանք է հանդիսա-նում»:

Առանձնապես սարսափելի է յերեխաների դրությունը: Յերեխաները գյուղում մնում են առանց վորևե հսկողու-թյան: Վաղ հասակից նրանք հարկադրված են զբաղվել

ֆիզիկական աշխատանքով: Դպրոց հաճախում է յերեխա-ների միայն փոքրիկ տոկոսը: Հազարավոր յերեխաներ ստիպված են տանը նստել, վորովհետև հագուստ չունեն դպրոց գնալու համար: Սնվում են նողկալի կերպով: Հի-վանդություններն ու մահացությունը յերեխաների մեջ հսկայական է: Գալիցիայում յերեխաների յերեք քառորդ մասը հիվանդ է թոքախտով և ռախիտով:

«Յերեխաները,—գրում է Վադովիցկի գավառի մի գյու-ղացի,—ման են գալիս ուռած փորերով, ունեն ծուռ վոտ-քեր և լուցկու նման բարակ ձեռքեր»:

Հուսահատությունը, անելանելի կարիքը ստիպում է Պուլավսկի գավառի գյուղացուն գրել.

«Կյանքն աստիճանաբար մահանում է, մարդիկ չեն ամուսնանում, ընկնում է ծննդաբերությունը, դե էլ ինչո՞ւ համար է, իսկապես, գյուղացին աշխարհ գալիս, յեթե, միևնույն է, նա աշխարհում վոչինչ լավ բան չի տեսնե-լու»:

***

Վորքան ավելի ուժեղ էր դառնում լեհական պանների ճնշումը, այնքան ավելի վորոշակիորեն էր սկսում ըմբռնել ուկրաինական գյուղացին հողի և ազգային ազատության համար պայքարելու անհրաժեշտությունը: Նա գիտեր, վոր համարյա էր կողքին—տահմանի այն կողմում—ազատ ու ունևոր են ապրում նրա արյունակից յեղբայրները, վո-րոնք ժողովուրդների մեծ և իմաստուն առաջնորդներ Լենի-նի ու Ստալինի ղեկավարությամբ տապալել են կալվածա-տերերի ու կապիտալիստների իշխանությունը և ամբիծ վոչնչացրել են շահագործումը և ազգային ճնշումը:

Գյուղացիները կալվածատիրական ճնշման դեմ տար-բեր միջոցներով էին պայքար մղում: Նրանք դիմադրու-թյուն էին ցույց տալիս հարկահավաքներին, դատական կատարածուներին, հարձակվում էին կալվածատիրական անների վրա, կտրում էին կալվածատիրական անտառները, կազմակերպում էին քաղցածների ցույցեր, կռվում էին վոստիկանության դեմ: 1921—1923 թ. թ. գյուղացիների այդ կարգի յելույթներ տեղի ունեցան ամբողջ Արևմտյան

Ուկրաինայում։ 1924—1925 թ. թ. գյուղացիական յելույթների ալիքը ծավալվեց Վոլինում։ Սկզբում՝ ուկրաինական գյուղացիության անջատ-անջատ յելույթները համաշխարհային տնտեսական կրիզիսի տարիներին դառնում են ավելի ու ավելի կազմակերպված, ընդարձակ, մարտական, ընդունում են գյուղացիական իսկական ապստամբությունների բնույթ։

1932—1933 թ. թ. Մինչև Գալիցիայում տեղի ունեցած գյուղացիական ապստամբությունն ընդգրկեց ամբողջ գյուղեր ու գավառներ և անցավ Արևմտյան Ուկրաինայի սահմաններից շատ հեռու։ Ապստամբության մղիչ հանդիսացավ գյուղացիության վրա հարկային ճնշման ուժեղացումը, որը ձեռնարկել էր կառավարությունը։ Բողոքի մասսայական շարժումը մի շարք վայրերում վերաճեց գյուղացիների լուրջ ընդհարումների վոստիկանության և զորքերի հետ։ Արյունալի ընդհարումներ տեղի ունեցան Լիսկոյի, Լապանովոյի, Ցաղովոյի, Լիմանովոյի և Աստուշինոյի ռայոններում։ Լիսկոյի ռայոնում ժանդարմերիայի դեմ ուղղված մարտերին մասնակցություն ունեցան 19 գյուղեր 10 հազ. բնակչությամբ։ Գյուղացիների պայքարն ամենաբարձր լարվածության հասավ 1933 թ. կեսերին։ Ամբողջ Մինչին Գալիցիան ընդգրկված էր ապստամբությամբ։ Լվովի և Կրակովի վոյեվոդությունների գավառներում 100 հազար գյուղացիների՝ ժանդարմերիայի և զորքերի (ապստամբների դեմ գործի էին դրել ավիացիան ու տանկերը) դեմ ուղղված մարտերը շարունակվեցին մի ամբողջ ամիս։ Մի քանի տասնյակ գյուղացիներ սպանվեցին։ Գրաբիններում ժանդարմերիայի հետ ընդհարվելու ժամանակ սպանվեցին 2 գյուղացի և վիրավորվեցին յերկուսը։ Ցասլոնկում 5 հազար գյուղացիներ ուղեվորվեցին հատելու կալվածատիրական անտառը, տեղի ունեցավ զինված ընդհարում վոստիկանության հետ, որի ժամանակ սպանվեցին ու վիրավորվեցին 25 մարդ, այդ թվում նաև վոստիկաններ։ Լանցուտսկի գավառում գյուղացիներն անցան կալվածատիրական կալվածքների գրավմանը։ Ապստամբությունը ճնշելու համար յեկած զինվորները հրաժարվեցին գյուղացիների վրա կրակել։ «Բունտովշչիկների» դեմ շարժեցին

զրեատները փոխած սպաների և յենթասպաների զորամասեր։ Զինված դատեմարտում սպանվեցին 50 մարդ։

Գալիցիական գյուղացիների հերոսական յելույթը դաժանորեն ճնշվեց։ Պատժիչ եքսպեդիցիաները չընջադայեցին ամբողջ յերկրում, բայց գյուղացիական շարժումը չընդհատվեց։

1934—1936 թ. թ. ընթացքում Արևմտյան Ուկրաինայի տարբեր տեղերում, հատկապես Վոլինում, տեղի ունեցան գյուղացիական գործադուլներ և զինված ընդհարումներ՝ վոստիկանության հետ։ Նորից համախակի եյին դարձել կալվածատիրական կալվածքների հրկիզման և գրավման դեպքերը։ Բանվոր դասակարգի հզոր յելույթների (դեպքերը Լվովում և Կրակովում) ազդեցության տակ գյուղացիությունը վերոտին պայքարի յե բարձրանում կալվածատերերի դաժան կամայականության և ճնշման դեմ։ Զամոյսկի և Գրուբեշովսկի գավառներում արյունալի ընդհարումներ են տեղի ունենում գյուղացիների և վոստիկանության միջև։ Գայ գյուղում, Լվովի մոտերքը, 1500 ուկրաինական գյուղացիներ խանդարեցին իշխանություններին Ֆերման բաժանել լեհական կոլոնիստների մի խմբի միջև։ Ռավա-Ռուսկի գավառի Վուլկա-Մազվեցկայում ուկրաինացի գյուղացիների ամբոխը մարտի մտավ վոստիկանության հետ, որն ուզում էր խլել այն արոտավայրերը, որտեղ գյուղացիներն արածացնում եյին իրենց անասուններին։

1937 թվին անցավ գյուղացիական համընդհանուր գործադուլի նշանաբանի տակ, գործադուլ, որն ընդգրկել էր ամբողջ Լեհաստանը։ Ուկրաինական գյուղացիության 90%-ը մասնակցություն ունեցավ այդ գործադուլին։ Ցեվ այս անգամ էլ Արևմտյան Ուկրաինան դառնում է ժանդարմերիայի և զորքերի հետ գյուղացիների ունեցած արյունալի ընդհարման թատերաբեմ։ Լվովի և Կրակովի վոյեվոդություններում պատժիչ եքսպեդիցիաները սպանեցին 41 գյուղացու, վիրավորեցին հարյուրավորների։

Ուկրաինական գյուղացիության մեջ տեղի ունեցող մշտական արկածումները ուժեղ կերպով անհանգստացրին լեհական կառավարությանը։ Ամենադաժանային տեռորով, ազգային կրկնապատկված ճնշմամբ էր պատասխանում նա

քաղցի ողակից, կալվածատիրական սարկութիւնից և շահագործումից դուրս գալու ուկրաինական գյուղացիության փորձերին:

ՊԱՆԱԿԱՆ ԼԵՀԱՍՏԱՆԸ—ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՆՏ

Լեհական պետությունը ժողովուրդների իսկական բանտ եր, ուկրաինացի միլիոնավոր մասսաների համար դահիճ, ուկրաինացիներ, վորոնք գտնվեցին մեր արևմտյան սահմանի այն կողմում: Պետական բռնության ամբողջ ապարատն ուղղված եր այն բանին, վորպեսզի ուկրաինացիներին վերածեր լեհական պաների գաղութային սորուկների, այնպիսի սորուկների, վորոնք կորցրած լինեին իրենց ազգային դեմքը, մոռացած լինեին իրենց հարազատ լեզուն:

Բռնությամբ լեհացնելը, ազգային կուլտուրան քայքայելը, ուկրաինական կուլտուրական հիմնարկների լիկվիդացիան, ազգային ինքնագիտակցության ամեն մի արտահայտությունը և պանական բարբարոսական ռեժիմի դեմ ունեցած դժգոհությունը հրով ու սրով ճնշելը—այս եր լեհական պաների գործողությունների ծրագիրը:

Ուկրաինացիները Լեհաստանում «ցածր ռասա» եին, լիովին իրավազուրկ: Ուկրաինացիներին արգելված եր վարչական ապարատի բոլոր ողակների մուտքը, նրանք անդամ զրկված եին սոյտիսի—գյուղական ավագի պաշտոնն զբաղելու իրավունքից: Ուկրաինական գյուղի բախտ այդ տնորինողը դերազանցորեն հավաքագրվում եր լեհական նորաբնակների և «ոսադնիկների» միջից:

Ուկրաինական լեզուն որենքից դուրս եր հայտարարված: Կառավարական բոլոր այն հիմնարկություններում, դատարանում, փոստում, յերկաթուղում, վորոնք գտնվում եին Արևմտյան Ուկրաինայի տերիտորիայի վրա, թույլատրված եր միայն լեհական լեզուն: Ուկրաինական բնակչության զրպալի շերտերը, այդ թվում նաև մինչև 25 տարեկան հասակի յերիտասարդությունը, համաձայն վերջին սահմանադրության, զրկված եին ընտրական իրավունքներից: Միայն ուկրաինացիների աննշան փոքրամասնությունը իրավունք ուներ մասնակցել սեյմի և տեղական ինքնավարությունների ընտրություններին: Ժողովները, ցույցերը, ուկրաինական ժողովրդի գործիչների հրապարակային յելույթներն արգելված եին: Ամեն տեսակի մեքենայություններով, բացահայտ տեռորով, ընտրական ցուցակներն անվավեր համարելով, առաջադրված թեկնածուների ձերբակալություններով լեհական իշխանություններն ընտրությունների ժամանակ ուկրաինական բնակչությանը թույլ չեյին տալիս բացահայտ կերպով արտահայտելու իր կամքը: Արևմտյան Ուկրաինայի խոշորագույն կենտրոնում՝ Լվովում, վորը ուկրաինական բնակչությամբ մեծամասնություն ունեցող քաղաք է, քաղաքային խորհրդի վերջին ընտրությունների ժամանակ ընտրվեց 64 լեհացի և վոչ մի ուկրաինացի: Այն մասին, թե սովորաբար ինչպես եին տեղի ունենում տեղական ինքնավարությունների ընտրությունները, պատմում է Լասսկի գավառի մի գյուղացի.

«Մեզ մոտ գյուղում տեղի եին ունենում գյուղական ռադայի ընտրությունները: Բայց, ըստ եության ասած, վոչ վոք վոչ վոքի չեր ընտրում, այլ պարզապես ավագը իր հետ ցուցակը բերեց, հրամայեց բոլորին ստորագրել—և վերջ»:

Ուկրաինական գյուղում գործում եր լրտեսների և պրովոկատորների հսկայական ցանց, լրտեսներ ու պրովոկատորներ, վորոնք խցկվում եին ազգային տարբեր կազմակերպությունների շարքերը: Դեմոկրատական ազգային կազմակերպությունները, պրոֆմիությունները, ինտելիգենցիայի միավորումը Արևմտյան Ուկրաինայում ամեն կերպ հետապնդվում եին, նրանց գործիչները ձերբակալվում, դանակոծման եին յենթարկվում, զնդակահարվում եին: Հենց վերջերս լեհական իշխանությունները արգելեցին ուկրաինական «Просвита» կուլտուր-լուսավորական կազմակերպությունը և «Сокол» սպորտային միավորումը:

Ուկրաինական բանվորների համար արդյունաբերական խոշոր, հատկապես ռազմական ձեռնարկությունների մուտքը փակ եր: Գործարան ընդունվելու համար ուկրաինական բանվորը պետք է ունենար վոստիկանության վկայությունը բարեհուսության մասին:

Բանակում ուկրաինացիներն իրավունք չունեցին հրամանատարական պաշտոններ գրավելու: Ապիկար և անապարձ սպայությունը, վորը հավաքագրվում եր լեհական կալվածատերերի և կուլակների զավակներից, սիստեմատիկաբար ծաղրում եր ուկրաինական զինվորին, հարյուրավոր «անհնազանդ» զինվորներ ձերբակալվում և դատվում եյին ռազմա-դաշտային դատարանով:

Լեհական դաղութարարները ուկրաինական ազգային կուլտուրայի իսկական ջարդ տարքեցին: Քսան տարի առաջ Արևմտյան Ուկրաինայի տերիտորիայի վրա կար 3600 ուկրաինական դպրոց: 1934—1935 թ. թ., պաշտոնական տվյալներով, մնացել եր 457 դպրոց, ըստվորում այդ դպրոցներում աշխարհագրության և պատմության, իսկ յերբեմն ել ուրիշ առարկաների դասավանդումը տարվում եր միայն լեհական լեզվով: Վերջին տարիներում ուկրաինական դպրոցների թիվը կրճատվեց մինչև 200-ի: 1919 թ. Վոլինում հաշվվում եր ուկրաինական 1050 դպրոց, իսկ ներկայումս միայն 5-ը: Գալիցիայում յերեխաների 5%-ն եր միայն մայրենի լեզվով սովորում, իսկ Վոլինում՝ 0,02%-ը: Լեհաստանում գոյություն ունեցող 770 միջնակարգ դպրոցների ընդհանուր թվից միայն 26 դպրոց և ուկրաինական: 743 պրոֆեսիոնալական դպրոցներից միայն 7-ն և ուկրաինական: Լեհաստանում ուկրաինական վոչ մի համալսարան չկար:

Այդպիսի քաղաքականության հետևանքով ուկրաինական բնակչությունը մատնված եր անգրագիտության, վայրենության և հետամնացության: Լեհաստանում 23%-ն անգրագետներ եյին, իսկ Արևմտյան Ուկրաինայի առանձին վոլոստներում՝ մինչև 60%-ը, հարավային Պոլեսյեում անգրագետների քանակը հասնում եր մինչև 70%-ի:

Հալածանքի յեր յենթարկվում վոչ միայն դպրոցը, այլ նաև գրականությունը, թատրոնը, մամուլը: Լեհաստանում լույս եր տեսնում պարբերական ընդամենը 1860 հրատարակություն, նրանցից ուկրաինական եր ընդամենը 40-ը, և այն ել առավելապես կրոնական: Ուկրաինական բոլոր թերթերի տիրաժը կազմում եր 7 հազար օրինակ: Լվովի ուկրաինական միակ թատրոնը իշխանությունները փակեցին 1927 թ. «մինչև հատուկ կարգադրություն», և այլևս չբացվեց: 20 տարվա ընթացքում Լեհաստանում ուկրաինական լեզվով հրատարակված գրքերը կարելի յե տասնյակներն մատների վրա հաշվել:

Ուկրաինական ինտելիգենցիայի դրությունը բացառապես ծանր եր: Հարատև դործազրկություն, նվաստացումներ և հետապնդումներ—այս եր Արևմտյան Ուկրաինայի ուսուցիչների, փաստաբանների, բժիշկների, նկարիչների և յերաժիշտների վիճակը:

Ավելի լավ չեր նաև Արևմտյան Ուկրաինայի քաղաքներում և ավաններում ապրող հրեա աշխատավոր բնակչության դրությունը:

Անտիսեմիտիզմը (հրեաներին հալածելը) լեհական կառավարության պաշտոնական քաղաքականությունն եր: Կրիզիսի հետևանքով քայքայվող հրեական չքավորության լայն մասսաները մուտք չունեցին վոչ արտադրության, վոչ ել դյուղատնտեսության մեջ. փոքրիկ ավաններում կիսված, նրանք դատապարտված եյին այլասերման: Ժամանակ առ ժամանակ լեհական բռնակալները հրեական ջարդեր եյին սարքում, կողոպտում և սպանում եյին հրեաներին, վոչնչացնում եյին նրանց դույքը: Կարմիր Բանակի ներս մտնելու նախորյակին Արևմտյան Ուկրաինայի քաղաքներում և ավաններում ծավալվեց արյունալի ջարդերի ալիքը:

Լեհական դաղութարարների «ազգային քաղաքականությունը» ուղեկցվում եր ամենավայրագ տեռորի սանձարձակությամբ: Լեհական բռնացողների սեժիմից դժգոհ լինելու փոքրագույն արտահայտությունն իսկ ճնշվում եր դաղանաբար: Ժամանակ առ ժամանակ ուկրաինական դյուղերն եյին ուղարկվում պատժիչ ջոկատներ, վորոնք անց եյին կացնում այսպես կոչված «պացիֆիկացիան», այսինքն՝ «խաղաղացումը»: Խաղաղացնողների սանձարձակ հորդանները սպանում եյին ուկրաինական դյուղերովը մեկ, սարսափ դցելով բնակչության մեջ: Նրանք ծեծում և դանակոծում եյին բոլորին՝ չխնայելով վոչ յերեխաներին, վո՛չ ծերերին: Նրանք կողոպտում եյին չքավորների աղքատիկ կահ-

Կարասիքը, քանդում և հրկիզում էին նրանց տնակները, հողի յերեսից սրբում էին ամբողջ գյուղեր:

«Պացիֆիկատորները» սովորաբար գործում էին այսպես. գինվորների ջոկատը գրավում և այն գյուղը, որը կասկածվում եր «կոմունիզմին համակրելու» մեջ: Բոլոր բնակիչներին քշում էին հրապարակ: Պատժիչ ջոկատի հրամանատարը հայտարարում եր, որ յեթե «կոմունիստական ապիտատորին» չհանձնեն, ապա ամբողջ գյուղը կտուժի: «Մտածելու» համար տրվում եր մեկ ժամ: Այդ ժամկետը լրանալուց հետո բանտարկվում եր յուրաքանչյուր հինգ մարդուց մեկը: Բանտարկվածներին դաժանորեն ծեծում և ուղեկցում էին մոտակա բանտը: Այնուհետև սկսվում եր գյուղի ամբողջ բնակչության մարակահարումը: Ծեծում էին հրացանի կոթերով, դանակոծում էին ռազմիներով, մարակներով, նաղայիկներով, լոմերով ջախջախում էին գանգերը, ձեռքերը, վոտքերը, կողոսկրները, ծեծում էին մինչև գիտակցությունը կորցնելու աստիճան: Ծեծվածներին ստիպում էին հող կուլ տալ և աղաղակել՝ «սա լեհական սրբազան հողն է»: Հարկադրում էին համբուրել ուլանական սապոգները, հայրերին ստիպում էին ծեծել իրենց վորդիներին, վորդիներին՝ ֆտրակահարել մայրերին և քույրերին:

«Պացիֆիկացիայի» եպիսկոպոսներից մեկը նկարագրում է ամերիկական հայտնի հրապարակախոս Ջոն Սպիվակը, որը շրջագայել է Արևմտյան Ուկրաինան:

«Մարտսիելի փաստ տեղի ունեցավ Կոլկի գյուղում: Տեղական իշխանությունները «խավար ժողովրդին» խոստացել էին ձրի դպրոց հիմնել մայրենի լեզվով: Բայց դպրոցները չեյին կառուցում և չեյին մտածում կառուցել:

Գյուղացիները մի քանի անգամ պատվիրակներ ուղարկեցին վոյեվոդության գլխավոր քաղաքը, պահանջելով կատարել տրված խոստումը:

Մայիսի մեկի որը կազմակերպած ցույցը անցավ դպրոցի համար պայքարելու նշանաբանի տակ: 22-ամյա կոմունիստուհին, տեղական ուսուցչուհին, ցուցարարներին տարավ դեպի Կոլկի գյուղը: Գյուղացիները տանում էին կարմիր դրոշակ «Մեր յերեխաներին դպրոց տվեք» մակագրությամբ: Ցույցին յեկան հարևան գյուղացիներից շատ բնակիչներ, վորոնց մեջ կային կանայք, անչափահասներ և դպրոցական հասակի յերկաս յերեխաներ: Ցուցարարների տրամադրությունը շատ խաղաղ եր: Ծիծաղում, կատակում էին:

Յերբ յերթը մոտեցավ Կոլկի գյուղին, նրանց դիմավորեց ստրաժնիկների մի խումբ: Ցույցը կանգ առավ:

— Ու՞ր եք գնում:

— Գյուղ: Ուզում ենք պահանջել մայրենի լեզվով ձրի դպրոց,—բոլորի փոխարեն պատասխանեց ուսուցչուհին...

Ավագ վոստիկանը բղավեց. «Յրվեցե՛ք, թե չե վատ կլինի»,—և կանգնեց ճանապարհի մեջտեղում:

— Մեզ դպրոց են խոստացել, և մենք այն կստանանք,— բացականչեց ուսուցչուհին: Բռնելով դրոշակը, նա առաջ շարժվեց: Վոստիկանական վերակացուն ապտակեց նրան: Ամբոխը ապմկեց: Սկսվեց տուրուզմբոց: Զայրացած մուժիկները կարգին ջարդուփշուր արին ստրաժնիկների կողերը, և նրանք թափով փախան:

Ամբոխը շարունակեց իր ճանապարհը: Առաջվա նման առջևից գնում եր ուսուցչուհին, տանելով կարմիր դրոշակը: Առաջին շարքերում յերեխաներն եյին:

Ճանապարհին յերևաց գինվորների մի ջոկատ:

Յենթարկվելով ոպայի հրամանին, ամբոխը կանգ առավ: Ուսուցչուհին շուտ յեկավ դեպի գյուղացիները և բղավեց.

— Յեկեք յերգենք մեր մարտական յերգը:

Գլխից վեր բարձր պահելով դրոշակը, նա զիլ ձայնով յերգեց. «Յելիր, ում կյանքը անիծել է...»: Սկզբում յերեխաներն արձագանգեցին հիմնին, իսկ հետո նրանց հետևից նաև գյուղացիները:

Գնդացրի տրաքոց... Յերգն ընդհատվեց: Լսվեցին աղաղակներ ու հառաչանքներ: 19 մարդ սպանվեց. սպանվածների մեջ եյին ուսուցչուհին ու 12 յերեխաներ»:

1930 թ. գյուղացիական հուզումների ալիքից հետո «պացիֆիկատորները» Արևմտյան Ուկրաինայում սրյան բաղնիք սարքեցին: 800 գյուղեր հրկիզվեցին: Բանդիտները քարուքանդ եյին անում ու հրկիզում ուկրաինական հա-

սարակական կազմակերպությունների չենքերը, դպրոցները, ընթերցարանները, կոոպերատիվները: Գյուղերում ու քաղաքներում ձերբակալում էին բոլորին՝ քիչ թե շատ «կնոկածելիներին»: Հարյուրավոր մտրակահար յեղածներ, մինչև մահը ծեծվածներ, տանջանքների, բռնաբարության յենթարկվածներ, հազարավոր ձերբակալվածներ—այս եր մինիստր Սլավոյ-Սկլադովսկու «պացիֆիկատորական» կամպանիայի արդյունքը:

Տասնյակ-հազարավոր ուկրաինացիներ՝ բանվորներ ու գյուղացիներ տանջվում էին պանական Լեհաստանի բանտերում և գնդաններում: Ուկրաինական ժողովրդի լավագույն զավակներին չարչարում, ծեծում էին այդ գնդաններում: Ամբողջ աշխարհում ազմուկ հանեց 1930 թ. Լուցկում տեղի ունեցած քաղաքական խոշոր դատավարությունը, վորը լեհական բանտերում տիրող ռեժիմի մասին հրամարությունը յերևան հանեց: Ահա թե ինչ էին պատմում մեղադրյալներն այդ դատավարության ժամանակ.

Բանվոր Շ.

«Ինձ շղթայեցին, բերանս փակեցին, վոտքերիցս սապոգները հանեցին: Քննիչը նստեց իմ գլխի վրա ու սկսեց հարվածել: Միաժամանակ ժանդարմը ռետինե գավազանով հարվածում եր իմ կրունկներին: Թե քանի հարված յես ստացա և ինչքան ժամանակ ինձ ծեծեցին, դժվար է ասել: Կարող է պատահել, 80, կարող է և 100 հարված... Այդ սպանդանոցը յես իմիճակի չեմ նկարագրելու»:

Բանվորուհի Պ.

«Նոյեմբերի 15-ին ինձ ձերբակալեցին Լվովում և տեղափոխեցին Լուցկ: Այստեղ ինձ և մնացած մեղադրյալներին, վորոնց ծեծելուն յես էս ներկա եյի, սկսեցին վայրենաբար տանջել: Քննիչը թելադրեց ինձ իմ ցուցմունքները, վորոնք յես չեյի կարող ընդունել, վորովհետև այդ ցուցմունքներն իրականությանը չեյին համապատասխանում: Այն ժամանակ նա ինձ ասաց, վոր ինձ հետ կխոսի լուցկյան սիստեմով. յեթե նա ցանկանա, ապա յես կընդունեմ նույնիսկ այն, վոր «յես սպանել եմ իրեն»: Ինձ յերկրորդ անգամ կանչեցին, շղթայեցին և շատ ցինիկաբար տանջեցին: Չեմ պատմի, վորովհետև ամաչում եմ: Պատառոտեցին իմ

ամբողջ հագուստը: Յերբ յես գիտակցությունս կորցնում եյի, կանգ եյին առնում, յերբ ուշքի եյի գալիս, ծեծը կրկնում եյին: Յերեք անգամ ինձ հարցաքննության կանչեցին, հարվածում եյին ռետինե գավազանով կրունկներիս, գլուխս ծակոտում եյին քորոցներով: Մի որ ինձ չծեծեցին, բայց ստիպեցին ներկա լինել ուրիշների ծեծին: Ծեծը տևեց մոտ մեկ ամիս: Յես սկսեցի արյուն թքել: Յես դեռ մինչև հիմա էլ հիվանդ եմ: Բոյկոն[1] սպանվեց: Յես լսեցի նրա վոչ-մարդկային աղաղակները. «Սպանեցեք ինձ»: Զգացվում եր այրված մարմնի հոտ: Լուսադեմին այդ աղաղակները լռեցին»:

Մի ուրիշ բանվորուհի, Ռ.

«Ինձ ձերբակալեցին 1930 թ. դեկտեմբերի 18-ին Լվովում: Գիշերն ինձ տարան Լուցկ: Առաջին որը ինձ վոտքիցս շղթայեցին սեղանին: Այդպիսի դրության մեջ ինձ պահեցին մի որ ու գիշերվա կեսը: Յերկու որ ինձ ուտելու բան չտվին: Մի քանի որից հետո ինձ տեղափոխեցին ընդհանուր կամերան: Այնտեղ յես տեսա մյուս խոշտանգվածներին: Մի քանի որից հետո ինձ տարան առաջին «հարցաքննության»:

Սենյակը լեփ-լեցուն եր վոստիկանության գործակալներով: Հարցեր եյին տալիս, վորոնց յես պատասխանեցի բացասաբար: Շպրտում եյին ծաղրական նկատողություններ: Հրաման տրվեց. «Շղթայել և ջուր տալ»: Ինձ շղթայեցին և սկսեցին քթիս միջով ջուր լցնել: Առաջին անգամ լցրին հինգ լիտր: Յես խեղդվում եյի, բայց վոչինչ չատացի: Լցրին դարձյալ հինգ լիտր: Բայց «հարցաքննությունը» մնաց անարդյունք: Նույն այդ գիշերը, ժամը 10-ին, ինձ նորից «հարցաքննության» կանչեցին: Քննիչի հարցերին յես չեյի պատասխանում: Նա սպառնաց և ասաց, վոր այս սենյակից վոչ վոք դեռ դուրս չի յեկել առանց ցուցմունք տալու: Նա հրամայեց ինձ՝ հանել հագուստս: Յերբ յես հրաժարվեցի, պատռեց իմ հագուստը և շղթայեց: Սրբիչով կապեց իմ աչքերը, ոգնության կանչեց ժանդարմին: Նրանք ինձ բարձրացրին և գրին սեղանի վրա: Քննիչը

1 Մեղադրյալներից մեկը:

բռնաբարեց ինձ՝ ինչպես դաղան: Դրանից հետո նա ինձ արձակեց և 10 ժամ ժամանակ տվեց մտածելու համար: Մի քանի օրից հետո յես ուժեղ ջերմախտ ստացա»:

Լեհական բռնակալները այսպես եյին դատաստան տեսնում ուկրաինական հեղափոխականների հետ, վորոնք արիաբար պայքարում եյին Արևմտյան Ուկրաինայի և ամբողջ Լեհաստանի ժողովուրդների ազատագրության համար:

Այս եր լեհական պան-դահիճների «ազգային քաղաքականությունը»:

Նույնիսկ անգլիական ու ֆրանսական մամուլի ակնավոր օրգաններն իր ժամանակին դայրույթ են արտահայտել այդ քաղաքականության հանդեպ: 1939 թ. փետրվարի 4-ին Լոնդոնի «Եկոնոմիստ» ժուռնալը գրում եր.

«Լեհերն սկզբում խոստացան՝ ուկրաինական պրովինցիաներին ավտոնոմիա տալ, բայց իրականում յերբեք ել չեն մտածել իրենց խոստումը կատարելու մասին:

Ընդհակառակը, նրանք ամեն կերպ նեղել և նեղում են ուկրաինական ազգին: Այն դիմադրությունը, վոր ցույց են տալիս ուկրաինացիները, լեհական իշխանությունների կողմից ճնշվում և ամենայն դաժանությամբ: 1930 թ. լեհական իշխանությունները ձեռնամուխ յեղան ուկրաինական բնակչության «խաղաղացմանը»: Լեհական զորքերն անխղճաբար դատաստան եյին տեսնում ուկրաինական գյուղացիների հետ: Այժմ, ըստ յերևության, Յեվրոպայում չկա մի ժողովուրդ, վորն այդպես դաժանորեն ճնշվեր, ինչպես Լեհաստանում բնակվող ուկրաինացիներն են»:

Անգլիական «Նյուս-Քրոնիկլ» թերթը 1939 թ. մարտի 15-ին հրատարակեց իր սեփական թղթակից Ուինտերտոնի հոդվածը, վորի մեջ վերջինը գրում եր.

«Լեհերը Արևմտյան Ուկրաինան դիտում են վորպես իրենց գաղութը: Լեհական ուկրաինացիները յերազում են անցյալի լավագույն ժամանակների վերադարձի մասին և անհամբերությամբ սպասում են, թե յերբ վրա կհասնի լեհական տիրակալությունից իրենց փրկվելու օրը»:

Տեռորով, ծեծերով, ընդհակահարություններով լեհական գաղութարարներն ուզում եյին ուկրաինական ժողովուրդը մունջ ստրուկների վերածել, խեղդել՝ դեպի ազատագրությունն ունեցած նրա կամքը: Չհաջողվե՛ց: 20 տարվա բռնության միջով, լեհական ժանդարմների այրած գյուղերի մոխիրների տակ, ուկրաինացիները կարողացան պահպանել իրենց ազգային ինքնագիտակցությունը, լեհական պանների լծից ազատագրվելու համար պայքարելու իրենց վճռականությունը:

ԴԵՊԻ ՆՈՐ ԿՅԱՆՔ

Լեհական պետության բթամիտ և ապիկար ղեկավարները յերկիրը գցեցին պատերազմի անդունդի մեջ: Պանների կողմից կեղեքվող ժողովուրդները չուզեցին պաշտպանել պետությունը, վորն այդ ժողովուրդներին պահում եր ստրկության, քաղցի և աղքատության մեջ: Լեհական բանակն անմարտունակ դուրս յեկավ, կառավարությունը դադարեց պոյություն ունենալուց, նեխման և փլուզման լաթային պետությունը քայքայվեց:

Արևմտյան Ուկրաինայի ժողովուրդը պանների կողմից թողնված եր բախտի քմահաճույքին: Քաղաքները մնացին առանց հացի, առանց լույսի: Բնակչությունը քաղցում եր: Ամբողջ Արևմտյան Ուկրաինայով անցավ ուկրաինական ու հրեական ջարդերի ալիքը: Ուկրաինական տանջված գյուղացիությունը վոտքի յելավ իր ճնշողների դեմ: Մտանիսլավովի և Լվովի վոյեվոդությունների բռնկվեցին գյուղացիական ապստամբություններ: Գյուղացիները գրավում եյին կալվածատիրական կալվածքները: Պանները պատսխանեցին նոր ռեպրեսիաներով, ջարդերով:

Այդպիսի իրադրության մեջ խորհրդային կառավարությունը ազնիվ և իմաստուն վորոշում ընդունեց՝ ոգնության ձեռք մեկնել մեր արյունակից յեղբայրներին՝ ուկրաինացիներին ու բելոռուսներին, վորոնք բնակվում են պանական Լեհաստանում: «Խորհրդային կառավարությունից,—հայտարարեց ռադիոյով արտասանած իր ճառում ընկեր Մոլոտովը,—չի կարելի նաև պահանջել անտարբեր վերաբերմունք դեպի արյունակից ուկրաինացիների և բելոռուսների բախտը, վորոնք ապրում են Լեհաստանում և առաջ գրվուրդը մունջ ստրուկների վերածել, խեղդել՝ դեպի ազատագրությունն ունեցած նրա կամքը: Չհաջողվե՛ց: 20 տարվա բռնության միջով, լեհական ժանդարմների այրած գյուղերի մոխիրների տակ, ուկրաինացիները կարողացան պահպանել իրենց ազգային ինքնագիտակցությունը, լեհական պանների լծից ազատագրվելու համար պայքարելու իրենց վճռականությունը:

ԴԵՊԻ ՆՈՐ ԿՅԱՆՔ

Լեհական պետության բթամիտ և ապիկար ղեկավարները յերկիրը գցեցին պատերազմի անդունդի մեջ: Պանների կողմից կեղեքվող ժողովուրդները չուզեցին պաշտպանել պետությունը, վորն այդ ժողովուրդներին պահում եր ստրկության, քաղցի և աղքատության մեջ: Լեհական բանակն անմարտունակ դուրս յեկավ, կառավարությունը դադարեց պոյություն ունենալուց, նեխման և փլուզման լաթային պետությունը քայքայվեց:

Արևմտյան Ուկրաինայի ժողովուրդը պանների կողմից թողնված եր բախտի քմահաճույքին: Քաղաքները մնացին առանց հացի, առանց լույսի: Բնակչությունը քաղցում եր: Ամբողջ Արևմտյան Ուկրաինայով անցավ ուկրաինական ու հրեական ջարդերի ալիքը: Ուկրաինական տանջված գյուղացիությունը վոտքի յելավ իր ճնշողների դեմ: Մտանիսլավովի և Լվովի վոյեվոդություններում բռնկվեցին գյուղացիական ապստամբություններ: Գյուղացիները գրավում եյին կալվածատիրական կալվածքները: Պանները պատսխանեցին նոր ռեպրեսիաներով, ջարդերով:

Այդպիսի իրադրության մեջ խորհրդային կառավարությունը ազնիվ և իմաստուն վորոշում ընդունեց՝ ոգնության ձեռք մեկնել մեր արյունակից յեղբայրներին՝ ուկրաինացիներին ու բելոռուսներին, վորոնք բնակվում են պանական Լեհաստանում: «Խորհրդային կառավարությունից,—հայտարարեց ռադիոյով արտասանած իր ճառում ընկեր Մոլոտովը,—չի կարելի նաև պահանջել անտարբեր վերաբերմունք դեպի արյունակից ուկրաինացիների և բելոռուսների բախտը, վորոնք ապրում են Լեհաստանում և առաջ գրվ-

նրվում էին իրավազուրկ ազգերի վիճակում, իսկ այժմ էլ բոլորովին պատահմունքի կամքին են թողնված»: Խորհրդային կառավարությունը,—ասաց այնուհետև ընկեր Մոլոտովը,—«իր սրբազան պարտականությունը» համարեց «ազնության ձեռք մեկնել իր յեղբայր ուկրաինացիներին և յեղբայր բելոռուսներին, վորոնք ապրում են Լեհաստանում»:

Սեպտեմբերի 17-ին Կարմիր Բանակի զորքերի գլխավոր հրամանատարությանը հրաման տրվեց՝ «անցնել սահմանը և իրենց պաշտպանության տակ վերցնել Արևմտյան Ուկրաինայի և Արևմտյան Բելոռուսիայի բնակչության կյանքն ու գույքը»: Նույն որն իսկ Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի փառապանծ զորամասերը մտան տարկացված Արևմտյան Ուկրաինայի տերիտորիան և ձեռնամուխ յեղան կուսակցության և կառավարության կողմից իրենց վրա դրված ազատագրական մեծ խնդրի կատարմանը:

Բնակչությունը մեր զորքերին շրջապատում է համաժողովրդական սիրով, յերախտագիտությամբ և ջերմ շնորհակալությամբ: Արևմտյան Ուկրաինայի աշխատավորների բազմաթիվ ցույցերում ծածանվում են դրոշակները՝ «Կեցցե՛ Ստալինը», «Շնորհակալությո՛ւն ընկեր Ստալինին» լոզունգներով: Արևմտյան Ուկրաինայի քաղաքների, գյուղերի և ավանների բնակչությունը մարտիկների վրա ծաղիկներ է թափում, նրանց դիմավորում է աղ ու հացով, խղճուկ խրճիթներում ունեցած ամեն լավ բանով: Կարմիր Բանակի զորամասերի մուտքը Արևմտյան Ուկրաինայի գյուղերն ու քաղաքները վերածվում է համաժողովրդական տոնախմբության:

Ազատագրված Ուկրաինան սկսեց ապրել նոր կյանքով: Քաղաքներում և ավաններում ստեղծված են Բանվորական գվարդիայի ջոկատներ, վորոնք ազնում են Կարմիր Բանակին՝ լիկվիդացիայի յենթարկելու թաղնված սպայական բանդաներին: Կազմակերպված են քաղաքային ժամանակավոր վարչություններ, վորոնք արդեն ձեռնամուխ են յեղել կարգ հաստատելուն, կանգ առած ու քայքայված արդյունաբերությունը վերականգնելուն, քաղաքի բնակչության մատակարարումը կազմակերպելու գործին: Արդեն ծխում

են տարիներով կանգնած գործարանների և ֆաբրիկաների ծխնելույզները: Հազարավոր գործազուրկներ վերադառնում են դաշդյահների մոտ: Գյուղերում ստեղծված են գյուղացիական կոմիտեներ: Կալվածատիրական հողերը, տները և ինվենտարը անցնում են գյուղացիների ձեռքը: Դպրոցներում և ուսումնական այլ հաստատություններում սկսվում են կանոնավոր պարապմունքները: Առաջին անգամն են յերեխաները հնարավորություն ստանում սովորելու և առաջին անգամ՝ մայրենի լեզվով: Բացվել են թատրոնները և կինոները: Ցերևան յեկան ուկրաինական լեզվով տասնյակ թերթեր: Բանակչությունն ազահությամբ ծանոթանում է ԽՍՀՄ աշխատավորների դրության հետ, ուսումնասիրում է Ստալինյան Սահմանադրությունը: Ամբողջ ձայնով մեկ հնչեցին ուկրաինական ժողովրդի՝ մոտիկ անցյալում արգելված յերգերը:

«Правда»-ի թղթակիցն այսպես է նկարագրում Լվովի կյանքը Կարմիր Բանակի զորամասերի գալու առաջին որերին.

«Քաղաքում նորմալ կյանքը վերականգնելու դժվարին խնդիրը դրված է Կարմիր Բանակի ներկայացուցիչ ընկ. Միշչենկոյի վրա: Լվովի բանվորները, ծառայողները, ինտելիգենցիան՝ համոզված լինելով, վոր պատերազմի վերջը յեկել է, ամեն կերպ ազնում են քաղաքի կյանքը վերականգնելուն:

Լվովի նախկին վոյեվոդության շենքի մոտ անսովոր բազմություն կա: Ո՞վ ասես այստեղ չէ: Կարելի յե հանդիպել գիտնականի, վորը յեկել է զրուցելու կարևոր գործերի մասին, ինժենների, վորն իր ծառայությունն է առաջարկում, բանվորի և բանվորների մի ամբողջ դելեգացիայի, վորոնք պատմում են գույքի պահեստների մասին: Այստեղ կարելի յե հանդիպել նաև գյուղերի ներկայացուցիչներին, վորոնք յեկել են կալվածատիրական տնտեսության հետ կապված հարցերը վճռելու, և առևտրականների, վորոնք ցանկանում են պարզել, թե կարող են արդյոք անցնել առևտրի:

Ամբողջ որն ընկ. Միշչենկոն ընդունում է մարդկանց,

զրուցում է նրանց հետ: Վոմանց պարզաբանում է, մյուսներին հարցուփորձ է անում, հանձնարարություններ տալիս:

Նա նախ և առաջ մտահոգված է նրանով, որ կարգի բերի պարենային ապրանքների առևտուրը: Այն ընկերները, որոնց հանձնարարված է կազմակերպել հաց թխելու գործը, զեկուցում են, թե քաղաքը ալյուրի և հացահատիկի ինչպիսի պաշար ունի: Պարզվում է մի հետաքրքրական մանրամասնություն: Կիսապաշարված քաղաքն ուներ ալյուրի յերկամյա պաշար: Բայց լեհական բանակի ապիկար հրամանատարությունը քաղաքի բնակչությանը պահում եր խղճուկ սննդարաժնով, չուզենալով կազմակերպել հաց թխելու գործը: Դեռ յերկու որ եկ չեր անցել Կարմիր Բանակի զորամասերի կողմից Լվովը գրավելուց հետո, և արդեն հաց թխելու և վաճառելու գործն սկսված է:

Ընկ. Միչչենկոյի առանձնասենյակն են մտնում Լվովի գավառի Սորոկի գյուղի գյուղացիական կոմիտեյի ներկայացուցիչներ Կրոչակը և Կրեպասը: Այդ գյուղի 230 գյուղացիական տներ ունեն ընդամենը 250 հեկտար հող, իսկ միայն կալվածատեր Ստոյեվսկին ունի 500 հեկտար: Կալվածատերը, հասկանալի յե, փախել է: Ցեվ կոմիտեյի ներկայացուցիչները, որոնց ընտրել եյին մի որ առաջ գյուղացիների ընդհանուր ժողովում, յեկել են Կարմիր Բանակի ներկայացուցչի մոտ, որպեսզի վճռեն կալվածատիրական տնտեսության հարցերը:

Նրանց պարզաբանում են, թե ինչպես վարվել հողի հետ, ինչպես կազմակերպել հացահատիկի կալսումը: Կոմիտեն պետք է հաշվի առնի կալվածատիրական դույքը, պահպանի և կարգադրություն անի: Ինքնագլուխ վոչ մի գործողություն չանել:

Գյուղացիական կոմիտեյի դելեգացիային փոխարինում է ինժեներների մի խումբ: Ինժեներ-ելեկտրիկ Մարկուսը հանձնարարություն է ստանում կարգի բերել ելեկտրոկայանների աշխատանքը: Ինժեներ Ռժեվսկին ձեռնամուխ է լինում արագորեն վերականգնելու ջրմուղը: Ինժեներ Բազիլևիչը կարգ կսահմանի քաղաքի հասարակական շենքերում:

Բայց դրանով չի ավարտվում զրույցը: Ինժեներ-ները տալիս են ուրիշ մասնագետների ազդանուններ, որոնք կարող են կարգավորել քաղաքային տնտեսության մյուս ճյուղերը:

Առանձնասենյակ է մտնում հացի մի փռի տեր: Նա պատրաստ է ձեռնամուխ լինել հաց թխելու գործին, բայց չգիտե՝ որտեղից ալյուր ճարի: Նրան տրվում է հասցեն: Բայց միաժամանակ նա նախազգուշացվում է, որ ալյուրը նրան բաց է թողնվում քաղաքում գոյություն ունեցող գնով, և որ, հետևաբար, նա նույնպես պետք է հացը վաճառի առանց լրացուցիչ, սպեկուլատիվ վերադիրների...

Ընկ. Միչչենկոյի մոտ յեկավ մինչև այժմ Լվովում վոչ հայտնի մի մարդ: Նա իրեն հանդես է բերել կրիտիկական մոմենտում, յերբ շատերը գլուխները կորցրել եյին, թողել եյին իրենց տեղերը և թաղնվել: Նրա ազդանունը Գերցոգ է: Նա իր վրա վերցրեց տրամվայի բանվորներին և ծառայողներին կազմակերպելու գործը:

Գալով ընկ. Միչչենկոյի մոտ, այդ փոքրիկ, աննկատելի աշխատավորն առաջարկեց վերականգնել տրամվայի և ավտոբուսի յերթևեկությունը քաղաքում: Այդ զրույցը կայացավ սեպտեմբերի 24-ին: Այն ժամանակ պայմանավորվեցին, որ տրամվայի յերթևեկությունը կսկսվի սեպտեմբերի 25-ից:

— Ստախանովաբար կարվի,—հայտարարեց Գերցոգը:

— Իսկ դուք վո՞ր տեղից գիտեք ստախանովականների մասին,—հարցրին նրան:

—Ինչպե՞ս թե: Ցես ամեն որ ժամը 24-ին լսում եյի Մոսկվայի ռադիո-հաղորդումները»:

Իսկ Սարնա քաղաքի քաղաքային ժամանակավոր վարչության նախագահը պատմում է.

«Քաղաքում ժամանակավոր վարչություն է ստեղծված, որի աշխատանքներին ակտիվ մասնակցություն են ունենում յերկաթուղային հանգույցի բանվորների և ինտելիգենցիայի ներկայացուցիչները:

Կյանքը նորմալ ընթացքի մեջ է մտնում: Կարգավորված է սննդամթերքների ու ապրանքների առևտուրը: Կինո-

թատրոնում ցուցադրվում են խորհրդային կինոֆիլմեր։ Բանվորական յերիտասարդության ակտիվը ձեռնամուխ յեղավ քաղաքային ակումբի կազմակերպմանը։

Յերկաթուղային հանգույցի բանվորները յեռանդուն կերպով վերանորոգում են շոգեմեքենաները և լայնացնում են յերկաթուղու գիծը, վորը մեզ մոտ 7 սանտիմետրով նեղ է, քան ԽՍՀՄ-ում։ Քաղաքում ստեղծված են Բանվորական գվարդիայի դրուժինաներ, վորոնք հեղափոխական կարգ են սահմանում։ Վաղը լույս է տեսնում քաղաքային թերթի առաջին համարը։

Ամեն որ մերձակա գյուղերից քաղաքի վարչություն են գալիս 100-ից ավելի գյուղացիներ, գյուղացիական կոմիտեների ներկայացուցիչներ։ Գյուղատնտեսական բոլոր աշխատանքները նորմալ են ընթանում։ Անցել ենք ճակնդեղի մասսայական հավաքմանը։ Ամարտոմում է աշնանացանը։ Զբաղվորությանը, վորը ցանքի մատերիալ չունի, գյուղացիական կոմիտեները ոգնություն են ցույց տալիս կալվածատիրական մթերանոցներից վերցրած սերմացվով։ Գյուղացիական կոմիտեները հաշվառման են յենթարկել կալվածատիրական բոլոր հողերը, կազմակերպում են այդ հողերից հավաքած հացահատիկի կալսումը։ Ամենուրեք պատրաստվում են հմիների (վոլոստների) գյուղացիական կոմիտեների ընտրությունների համար գյուղերի ներկայացուցիչների հրավիրմանը։

Գյուղական բնակչությունը ձգտում է մեզ ոգնել մեր աշխատանքում։ Նա ակտիվ կերպով մասնակցում է թաղնված սպաների, ժանդարմների, ոսադնիկների՝ ուկրաինական ժողովրդի թշնամիների ձերբակալմանը...

Մեր ավանի, ինչպես նաև ամբողջ Արևմտյան Ուկրաինայի բնակչությունը վերապրում է իր կյանքի բեկման մեծ և ուրախ որերը»։

Արևմտյան Ուկրաինայի աշխատավորները, վորպես հավասարներ հավասարների մեջ, վորպես իրենց յերկրի տերեր ու իրենց յերջանկությունը կերտողներ, վառք են դնում նոր, ազատ կյանքի ուղին։

ԳՈՍ. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ՀԱՅՍՍՀ-ՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
Արևմտյան Ուկրաինան ռուսական վաղեմի յերկիր է	4
Հարուստ, բայց հետամնաց յերկիր	13
Արևմտյան Ուկրաինայի արդյունաբերությունը գաղութային ճնշման տակ	19
Գյուղացիությունը պանների լծի տակ	26
Պանական Լեհաստանը—ժողովուրդների բանտ	46
Դեպի նոր կյանք	55

Թարգմանիչ Ռ. Փորոուդյան
Խմբագիր Ռ. Շիրոյան
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Սրբագրիչ Հ. Դոլուխանյան
Գլխավոր սրբագրիչ Լ. Արովյան

Գլավլիտի լիազոր № Ն. 2915, հրատ. № 753
Գրավոր № 240, տիրաժ 5000
Հանձնվել է արտադրության 5/XI 1939 թ.
Ստորագրվել է տպագրելու 21/XI 1939 թ.
Գինը 80 կ.

Քաղաքական գրականության Պետական հրատարակչության տպարան,
Երևան, Ալավերդյան № 65

ԳԻՐՔ 80 Կ.

Д. МИН

ЗАПАДНАЯ УКРАИНА

Государственное издательство политической литературы
Ереван, 1939